



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍԻՏՈՒ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ  
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ 1915-1916 ԹԹ.  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմող և ներածության հեղինակ՝  
Տիգրան Չարարյան

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության  
բանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի  
որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
Լ. Ա. Բարսեղյան

Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-  
1916թթ. Հայոց ցեղասպանության մասին - Կազմող և ներածու-  
թյան հեղինակ՝ Տիգրան Չաքարյան

Ինչպես բազմաթիվ հանցագործներ իրենց սև գործը կա-  
տարելու համար որպես բարենպաստ ժամանակ ընտրում են գիշերը,  
այնպես էլ մարդկությանը հայտնի ամենածանր հանցագործության՝  
ցեղասպանության իրականացման համար ամենապատեհ առիթը  
պատերազմն է, մասնակի համաշխարհային պատերազմը։ Օգտր-  
վելով պատերազմի ընձեռած հնարավորություններից, մասնավորա-  
պես՝ վկաների բացակայությունից, ցեղասպան մտադրություն ունե-  
ցող այս կամ այն կառավարությունը, բողարկվելով «անհրաժեշտ  
ինքնապաշտպանության» մասին կեղծ հայտարարություններով,  
գործի է անցնում, ամենակարծ ժամկետում և ամենաարդյունավետ  
ձեռվ ոչնչացնելու համար իր զոհին։

1915թ. գարնանը, երբ օսմանյան հանցագործ կառավարու-  
թյունը ձեռնամուիս էր լինում արևմտահայության ֆիզիկական բնա-  
ջնջմանը, շատ բարենպաստ իրավիճակ էր ստեղծվել։ Դեռ վերջերս  
հայերի իրավունքների պաշտպանության պատրվակով անընդհատ  
Օսմանյան կայսրության վրա ճնշում բանեցնող տերությունների  
եռյակը՝ Սեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պատերազ-  
մի մեջ էին նրա դեմ, հետևաբար՝ չունեին ազդեցության լծակներ։  
Շուտով նրանց միացավ և Խոտայիան (1915թ. մայիսի 23-ին)։ Գերմա-  
նիան և Ավստրո-Հունգարիան, որ դեռ պատերազմից առաջ հայկա-  
կան հարցում աչք փակելու հաշվին ծեռք էին բերում թուրքական իշ-  
խանությունների աճող բարեհանությունը, պատերազմի պայմաննե-  
րում, հանդիսանալով դաշնակից երկիր, պաշտոնական մակարդա-  
կով պահեցին քար լրություն։

Փաստորեն, այդ իրավիճակում, պատկերավոր ասած, միակ  
վկան, ԱՄՆ-ն էր՝ հանձին Օսմանյան կայսրությունում գտնվող ամե-  
րիկյան դիվանագետների, միսիոններների, մասնավոր ամեանց։  
Նրանք գտնվում էին կայսրության ամենաստարբեր մասերում, որոնք  
դարձան Հայոց ցեղասպանության թատերաբեմը։

Ամերիկյան ներկայացուցիչները դեռ մինչև պատերազմը  
բավական լայն աշխատանքներ էին ծավալել ԱՄՆ-ի շահերը այդ  
երկրում առաջ մղելու համար։ 1906 թվականին իր ներկայացուցչի  
դիվանագետական աստիճանը բարձրացնելով դեսպանի մակարդա-  
կի՝ ԱՄՆ-ը XX դարասկզբին աշխատորեն ներգրավվեց Օսմանյան  
կայսրությունում ազդեցության ոլորտների համար պայքարին։ ԱՄՆ-  
ն այդ պայքարը մղում էր այլ մերոդներով, քան եվրոպական տերու-  
թյունները՝ օգտագործելով այսպես կոչված «մարդասիրական շահե-

րի» մասին կարգախոսը: Ամերիկյան միսիոներները Օսմանյան կայսության բոլոր քիչ թե շատ աշքի ընկնող բնակվայրերում հիմնում էին իրենց կրթական, բարեգործական, հոգևոր հաստատությունները, որոնք նպատակ ունեին օգնել կայսրության քրիստոնյա բնակչությանը, նախևառաջ՝ հայերին, քանի մյուս փոքրամասնությունները մեծ մասամբ մերժում էին նման միջամտությունը: Ծիշտ է, միսիոներների հիմնած կրթական և բարեգործական հաստատությունները նպաստում էին արևմտահայության մի հատվածի կրթամշակութային և սոցիալական պահանջների բավարարմանը, սակայն միաժամանակ էլ նպաստում էին նրանց օտարմանը հայրենի կրոնից և մշակույթից: Այսպես, ըստ Վիճակագրության, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ամերիկյան միսիոներների ջանքերով բողոքական էին դարձել արևմտահայության 3 %-ը, իսկ ԱՄՆ արտագաղթած հայերի մեջ նրանց բաժինը հասնում էր 20 %-ի:<sup>1</sup> Փաստորեն, արևմտահայերի մի հատվածը փորձում էր այս կերպ սուսալ ԱՄՆ-ի նման հզոր պետության հովանավորությունն ու աջակցությունը: Մյուս կողմից էլ հայերը ԱՄՆ-ի համար լրաց խաղաքար էին Օսմանյան կայսրությունում ազդեցության ոլորտների ընդլայնման հարցում: Օսմանյան կայսրությամբ հայերի դեմ սանձազերծված ցեղասպանությունը ծանր հարված հասցրեց հայերի հետ կապված ամերիկյան ծրագրերին: Հայերի զանգվածային բռնագաղթի ու կոտորածների հետևանքով ամերիկյան միսիոներների ողջ գործունեությունը կենտրոնացավ գոտու մարդասիրական գործունեության վրա, ի դերև եղան տասնամյակների ջանքերն ու ներդրված միջոցները:

Սակայն ԱՄՆ-ի շահերը Օսմանյան կայսրությունում բնավ էլ միակողմանի չեին, այլ ընդգրկում էին նաև քաղաքական և տնտեսական ոլորտներ: Հեռու լինելով Խորքի մտորքիայից և քիչ ուժային լծակներ ունենալով նրա նկատմամբ՝ ԱՄՆ-ն աշխատում էր իր ներքափանցումը Խորքիա կատարել բացարձակապես խաղաղ միջոցներով: Ինչպես տվյալներն են ցույց տալիս, ամերիկա-քուրքական առևտուրը Առաջին աշխարհամարտի նախօրեին զնալով աճել էր.<sup>2</sup> ԱՄՆ-ը

<sup>1</sup> Г. Махмурян, Вопросы новой истории Армении в современной историографии США, в кн. Новая история Армении в трудах современных зарубежных авторов, отв. ред. Саакян Р. Г., Ереван, 1993, стр. 115.

<sup>2</sup> Н. Г. Киреев, Начало проникновения американского империализма на Ближний Восток, в кн. Внешнеэкономические связи Османской империи в новое время, конец XVIII- начало XXв., отв. ред. Ю. Петросян, Москва, 1989, стр. 149.

պատերազմի նախօրեին ուներ Խորքիայում ներդրումների ընդարձակ ծրագիր, որը, սակայն չիրականացավ Գերմանիայի ընդդիմության պատճառով:<sup>3</sup> Քաղաքական առումով ԱՄՆ-ը փորձում էր պատերազմի ստեղծած պատեհությունը օգտագործել իր օգտին: Ծիշտ է, կապիտուլացիաների վերացումը պատճառ եղավ Խորքիայի հետ հարաբերությունների որոշ սրնան, սակայն բուրքական իշխանությունները ամեն կերպ փորձեցին մեղմել ամերիկյան ներկայացուցիչների վրդավանքը:<sup>4</sup> 1915թ. մարտին անգամ պաշտոնական Վաշինգտոնը դեսպան Սորգենքառի միջոցով փորձեց հասնել այն բանին, որ Պերայում, Կ. Պոլսում և Սկյուտարիում՝ Բոսֆորի նեղուցի շուրջ, ստեղծվեն «չեզոք գոտիներ», խաղաղ բնակչության ապահովության նպատակով, որը նույտք գործելու իրավունք չէին ունենալու ոչ մի հակամարտող կողմի գորքեր: Նկատի ունենող այն հանգամանքը, որ հենց այդ շրջանում ամերիկյան երկու ռազմանավ կար, այդ ծրագիրը գնահատվեց իրեն Բոսֆորի նեղուցի շրջանում ամերիկյան ազդեցության գոտի ստեղծելու փորձ և մերժվեց նաև Անտանտի երկրների կողմից:<sup>5</sup>

Ամեն դեպքում, բուրք-ամերիկյան հարաբերությունները Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, կարելի է զնահատել իրեն բարեկամական, և անգամ 1917թ. ապրիլին, երբ ԱՄՆ-ը Գերմանիային պատերազմ հայտարարեց, բուրքական կարինետը երկար տատանումներից հետո միայն որոշեց խօնի հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Չնայած խօնմանը՝ երկու կողմերն էլ ծեռնպահ մնացին միմյանց պատերազմ հայտարարելուց և անգամ որոշ ամերիկյան միսիոներներ մնացին Խորքիայում:

Այսպիսի քաղաքական ֆոնի վրա էին տեղի ունենում բուրքական իշխող վերնախավի կողմից ծրագրված հայերի տեղահանումներն ու կոտորածները, որոնք պատմության մեջ մտան իրեն «ցեղասպանություն»: Խորքիայի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքանությունը տնօրինողների վրա բնակված բարդ խնդիր էր դրված: նախ անհրաժեշտ էր հայերին պաշտպանել օրեցօր սաստկացող բռնություններից, ապա մյուս կողմից՝ նաև յավ հարաբերություններ

<sup>3</sup> L. J. Gordon. *American Relations with Turkey: An Economic Interpretation, 1830-1930*. Philadelphia, 1932, pp. 27-28. տես նաև Шпилькова И. В. Империалистическая политика США в отношении Турции (1914-1920 гг.). Москва. Политиздат, 1960, стр. 36-37.

<sup>4</sup> Gordon, op. cit., pp. 198-200.  
<sup>5</sup> Шпилькова, там же, стр. 40-41.

պահպանել մուրքիայի հետ։ Դա բավական դժվար խնդիր էր, քանի որ ԱՄՆ շարունակ հասնող տեղեկությունները վկայում էին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ մեծածավալ հալածանքների մասին, և այդ լուրերը ամեն դեպքում դառնում էին հասարակության սեփականությունը։ Հայող ցեղասպանության վերաբերյալ ԱՄՆ հասած լուրերը, բավական տարբեր աղբյուրներից էին սերում, ինչը, ի դեպ հակաֆաստարկ է այն պնդումներին, թե իբր ամերիկյան առյուրները միակողմանի են՝ հիմնված հայերի կամ էլ մահմեդականներին թշնամաքար տրամադրված միսիոններների ներկայացրած սուբյեկտիվ և կեղծ տեղեկությունների վրա։ Ամերիկյան միսիոնները, որոնք ներկա էին Հայոց ցեղասպանությանը առնչվող քիչ թե շատ կարևոր բազմաթիվ վայրերում (օրինակ՝ Խարբերդում, Վանում, Շիրլիսում, Սեբաստիայում, Մարաշում և այլուր) հնարավորություն են ունեցել իր ամենատարբեր փուլերում ականատես լինել Հայոց ցեղասպանությանը՝ իր ամենատարբեր փուլերում սկսած տղամարդկանց ճերբակալություններից, վերջացրած՝ Միջազգայի համակենտրոնացման ճամբարներում տեղահանյալների դանդաղ ու տանջակից մահով։ Ամերիկյան միսիոններները աշխարհին ներկայացրել են, օրինակ, Վանում հայերի մտացածին «ապստամբության» իրական պատկերը։ Սեբաստիայում ծառայող Սերի Գրեքեմը 1915թ. ամռան ուղեկցել է հայ տարագրյալներին Սեբաստիայից մինչև Մալաթիա, որտեղից այն կողմ նրան արգելվել է շարունակել ճանապարհը։ Բայց այքանն էլ բավական էր, որպեսզի ամերիկացի միսիոնները իր աշքերով տեսներ հարյուրավոր մարդկանց սպանությունները, բալանը, կանանց ու աղջիկների բռնաբարություններն ու առևանգումը, մի խոսքով՝ Հայոց ցեղասպանությունը իր քատմնելի պատկերներով։<sup>6</sup>

1915թ. հոկտեմբերին Խարբերդում ամերիկյան հյուպատոս Լ. Կեիսը՝ ամերիկացի դոկտոր Ասկինսոնի ուղեկցությամբ ճանապարհ ընկավ դեպի մոտակա Գյուղուկ (Ծովք) լիճը, որի ափին երկու ամերիկացիները հայտնաբերեցին 5-10000 հայ տղամարդկանց, կանանց և երեխաների դիակներ՝ բռնի մահվան ակնհայտ հետքերով։

<sup>6</sup> S. E. Moranian, Bearing Witness: The Missionary Archives as Evidence of the Armenian Genocide, in *Armenian Genocide in Perspective*, R. Hovannissian, ed., London: Transaction Pub., 1991, pp. 116-117.

և նեխման տարբեր աստիճանի մեջ։<sup>7</sup> Սակայն այս վաստերը բոլորվին էլ հեշտ բան չէր տեղ հասցնելը նկատի ունենալով այդ տարիներին մուրքիայում տիրող դաժան գրաքննությունը, որին ենթարկվում էին անգամ ամերիկյան քաղաքացիների բլրակցությունները, և նոյնիսկ երբեմն ամերիկյան հյուպատոսների նամակագրությունը։ Այսպես, օրինակ Մարզվանում գտնվող դրկտոր Մարդենը վկայում էր, որ իր և իր գործընկերների նամակագրական կապը չի թույլատրվում գրաքննիչների կողմից։<sup>8</sup> Ստեղծված իրավիճակում օգնության ձեռք մեկնեցին ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչները՝ թույլատրելով օգտագործել պաշտոնական կապի միջոցները։ Սա հարկադրված քայլ էր, բայց ոչ սովորական, այլ պատերազմական պայմաններում թելադրված։ այդ ամբողջ նամակագրությունն անցնում էր Կ. Պոլսի ամերիկյան դեսպանատան միջոցով։<sup>9</sup> Այսպիսով, ամերիկյան դիվանագիտները, անգամ ականայից, ծանրանում էին Հայոց ցեղասպանությանը վերաբերող ամերիկյան միսիոններների վկայություններին։ Սակայն սխալ կիխներ պնդելը, թե հյուպատոսների վկայությունները հիմնված են եղել միայն միսիոններներից բխող տվյալներից, դրանք կազմում են հյուպատոսների գեկուցագրերի կարելոր, բայց ոչ միակ բաղադրիչը։ Ի վերջո՝ իրենք՝ հյուպատոսներն են ականատես եղել շատ այն իրադարձություններին, որոնց մասին վկայում են միսիոններները։ Ամերիկյան հյուպատոսներ Լ. Կեիսի (Խարբերդ), Օ. Հայզերի (Տրավիգոն), Զ. Ջերանի (Հայեա) և այլոց գեկուցագրերը լի են այնպիսի մանրամասներով, որոնք համադրվում, իսկ շատ դեպքերում էլ լրացնում են այդ և հարակից վայրերում հայերի ում բոլոր ապահովությունների մասին միսիոններների վկայությունները։

ԱՄՆ-ի արխիվներում Հայոց ցեղասպանության մասին վավերագրերի ուսումնախրման գործում մեծ ավանդ ներդրած Ա. Մարաֆյանը, մասնավորապես գրելով Լ. Կեիսի տեղեկությունների աղբյուրները նշում է, որ դրանք կարելի է բաժանել երեք պայմանական խմբերի՝ 1) հյուպատոսարանի հայ, և թուրք աշխատակիցների։

<sup>7</sup> Ibid., p. 119, տես նաև L. Davis, *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, edited and introduced by Susan K. Blair, New Rochelle, N. Y.: Aristide Katartzas, 1989, pp. 80-82.

<sup>8</sup> Moranian, Bearing Witness ..., p. 110.

<sup>9</sup> R. Adalian, “Le génocide des Arméniens dans les archives américaines,” dans *L'Actualité du génocide des Arméniens: Actes du colloque organisé par le Comité de Défense de la Cause Arménienne*, Paris, Créteil: Edipol, 1999, p. 96.

օտարերկրացի քաղաքացիների (ամերիկացիներ, գերմանացիներ և այլն), 2) ականատեսների (հայեր, բուրքեր, քրտեր) և 3) հյուպատոսի սեփական տեղեկատվությունը՝ նախ իրքը բռնությունների ականատեսի և նաև առանձին հայերի ճակատագիրը քննարկողի:<sup>10</sup> Խերևս ներկայացվող զանկը այնքան ընդգրկուն է, որ կարող է վերաբերել մեզ հետաքրքրող տարածաշրջանում գտնվող զանկացած ամերիկյան հյուպատոսի: Մա մի անգամ ևս ցույց է տալիս, որ Կ. Պոլսի դեսպանատունը, թեև ուշացումով և որոշ դժվարություններով էր ստանում հայերի տեղահանման ու կոտորածների մասին տեղեկատվություն, սակայն այդ տեղեկությունները՝ մանավանդ ամերիկյան աղբյուրներից չեն կարող համարվել միակողմանի, քանզի իրենց մեջ ներառում էին բազմաթիվ աղբյուրներ: Հատ այդմ էլ կարելի է պնդել, որ պետք պարտամենտը Կ. Պոլսի ամերիկյան դեսպանից ստացել է հավատի տեղեկատվություն: Խերևս բացառություն են կազմում 1915թ. ապրիլ-հունիս ամիսներին ուղարկված որոշ հաղորդագրությունների առանձին հատվածներ, որոնց հավաստիությունը, ինքը՝ հեղինակն է հաճախ կասկածի ենթարկել: Այդ բացառությունները թերևս կապված էին այդ տվյալների՝ պաշտոնական աղբյուրներից ծագելու հանգամանքի հետ, ինչպես վերը նշվեց, պատերազմի տարիներին Թուրքիայում ստեղծված նամակագրական կապի դժվարությունների և սահմանափակումների հետ:

Հայոց գեղասպանության մասին վկայությունների հետազանկատագիրը ևս ուշագրավ է: Ինչպես պարզվում է Ա. Սարաֆյանի՝ համեմատաբար վերջերս լրուս տեսած հոդվածից՝ պետդեպարտամենտը 1915թ. հունիսից սկսած, Օտարեկյայ միսիաների լիազորների ամերիկյան խորհրդի (ՕՍԼԱԽ) քարտուղար Զ. Բարտոնին հաւաքուրություն է ընձեռել ծանոթանալու դեպարտամենտի արխիվում՝ հայերի գեղասպանությանը վերաբերող որոշ նյութերին: Սեպտեմբերի ինչպես կեսերին հայերի կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեի նախագահ՝ Բարտոնը գրքուղիվ է Վաշինգտոն, որ նրան պետդեպարտամենտը արտոնել է ծանոթանալ հայերի կոտորածներին վերաբերող զանկացած փաստաթղթի հետ: <sup>11</sup> Կազմակերպու-

<sup>10</sup> United States Official Documents on the Armenian Genocide, Vol. III: The Central Lands, compiled and introduced by A. Sarafian, Watertown, Mass.: Armenian Review, 1995, p. X.

<sup>11</sup> Sarafian, “The Paper Trail: The American State Department and the Report of the Committee on Armenian Atrocities,” in *Revue du monde arménien moderne et contemporain*, Tome 1, Paris, 1994, p. 127, p. 129.

թյունը, առանց նշելու աղբյուրները, հաճախ նաև վավերագրերում հիշատակվող տեղանուններն ու անձնանունները՝ անվտանգության նկատառումներով, 1915թ. հոկտեմբերի 4-ին «Նյու Յորք Խայմսում» տպագրում է մի երկար հրապարակում, որ բայ Սարաֆյանի օգտագործվել էին պետդեպարտամենտի առնվազն 19 վավերագիր, որոնք հավաքել և խմբագրել եր Զ. Բարտոնը:<sup>12</sup>

1916 թվականից սկսած, պետդեպարտամենտը՝ Սարտոնին վերապահում է անսահմանափակ իրավունք՝ հայերի տեղահանումներին ու կոտորածներին վերաբերող փաստարդեր ուսումնասիրման համար: Այս համարանարից օգտվելով՝ Բարտոնը անգիտացի պատմաբան ծոյնքին է ուղարկում պետդեպարտամենտի արխիվային նյութերը՝ խնդրելով, որ չնշվեն դրանց ծագումն ու այլ մասնամասներ, ինչպես օրինակ՝ անձանց և փայլերի անունները:<sup>13</sup> Մեկ այլ հոդվածում Սարաֆյանը նշում է, որ հենց ՕՍԼԱԽ-ի փոխանցած նյութերը (որոնց կեսից ավելին պետդեպարտամենտին հասցեագրված պաշտոնական գեկուցագրերն են) կազմում են Բրայսի և ծոյնքի հայտնի «Կապույտ գրքի» հիմնական նյութը:

Ամերիկյան պաշտոնական վավերագրերը հասարկությանը հայտնի էին դառնում նաև այլ ճամապարհներով: 1915թ. հունիսի 31-ին Կ. Պոլսի ժամանած գերմանացի հայտնի հայասեր Լեփսիտուրը հանդիպում է ունենում Հ. Սորգենբերգի հետ և խնդրում նրան հնարավորություն տալ ծանոթանալ դեսպանատանը եղած Հայոց գեղասպանությանը վերաբերող որոշ նյութերին: Սեպտեմբերի ինչպես կեսերին հայերի կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեի նախագահ՝ Բարտոնը գրքուղիվ է Վաշինգտոն, որ նրան պետդեպարտամենտը արտոնել է ծանոթանալ հայերի կոտորածներին վերաբերող զանկացած փաստաթղթի հետ:

Եթե նշարագրենք Հայոց գեղասպանության մասին տեղեկատվական շրան, այն կարելի է համեմատել ծառի հետ, որի արմատները՝ տեղեկատվության աղբյուրները, ինչպես նաև ճյուղերը՝ այդ տեղեկությունների տարածման ուղիները, բազմաթիվ են: Մինչդեռ, եթե շարունակենք այս համեմատությունը, ապա ծառի բունը՝ Կ. Պոլսի ամերիկյան դեսպանատանից Վաշինգտոն՝ պետդեպարտամենտին հասնող տեղեկատվական ուղին միակն է, առանց այլնու-

<sup>12</sup> Ibid., p. 129.

<sup>13</sup> Ibid., p. 131.

<sup>14</sup> RG 59,867.4016/83 բերվում է բայ Armenian Review, 1984, Spring, Vol. 37, No. 1, p. 85.

րանքի: Ըստ էության՝ այդ ուղիով է անցել այդ տարիներին Հայոց ցեղասպանության մասին աշխարհին ներկայացված տեղեկատվության մեջ մասը: Այս հաճգամանքը բացառիկ արժեք է տալիս Հ. Մորգենթաուի գեկուցագրերին, որոնցում բերվող փաստերն ու վերլուծությունները մեծ մասամբ հիմնված իրեն հասած գեկուցագրերի վրա, բյուրեղացնում էին վերոհիշյալ առյուրների պարունակած ողջ տեղեկատվությունը: Նրանք, ովքեր կասկածի տակ կդնեն այդ գեկուցագրերում ներկայացվող փաստերի իսկությունը, մեխանիկորեն ստիպված կիմնն ենքել նաև այդ տարիներին Օսմանյան կայսրությունում ծառայող ԱՄՆ-ի դիվանագետների և այլ քաղաքացիների ներկայացրած ծավալուն վկայությունները: Սա ևս մի զորակոր փաստարկ է Մորգենթաուի ներկայացրած տվյալների բացառիկ արժեքի:

Զանի որ, ինչպես Ռ. Աղայանն է նշում, Թուրքիայի ներքին շրջաններից հայերի բնաջնջման մասին ամերիկյան աղբյուրներից ծագող համարյա բոլոր տեղեկություններն անցել են Կ. Պոլսի ամերիկյան դեսպանատան միջոցով, որ Հ. Մորգենթաուն, ծանոթանալով դրանց հետ է պետդեպարտամենտին: Ամերիկյան արտաքին գերատեսչության արխիվները (գոյն 1915թ.) կարելի է անկասկած համարել Հայոց ցեղասպանության մասին վավերագրերի հարստագույն շտեմարան:<sup>15</sup> Առանց այդ վավերագրերի գոյություն չին ունենալ Հայոց ցեղասպանության մասին վաղուց արդեն դասական համարվող հարստագույն ծողովածուները՝ Բրայսի և Թոյնբիի «Կապույտ գիրքը» և Լեփիսիուսի «Տեղեկագիրը»:

Ստորև ներկայացվող փաստաթրթերն ունեն որոշակի տրամաբանական ուղղվածություն: Նախ՝ ներկայացվում են Հ. Մորգենթաուի գեկուցագրերը՝ հասցեագրված պետդեպարտամենտին, դուրս բողներով նրանք, որոնք իրականում գրվել են ամերիկյան հյուպատոսների կամ այլ անձանց կողմից, բայց փոխանցվել են Մորգենթաուի միջոցով: Այսուղեւ են հավաքված նաև պետդեպարտամենտի պատասխան հաղորդագրությունները ԱՄՆ-ի դեսպանին: Ծիշտ է, այդ փաստաթրթերը փորրաթիվ են և ոչ ծավալուն, սակայն դանից էլ կարելի է ստանալ բավական արժեքավոր տեղեկություններ տեղի ունեցածի նկատմամբ ամերիկյան արձագանքի, ԱՄՆ-ի վարած քաղաքականության մասին: Եվ ի վերջո՞ այսուղեւ են հավաքված Հայոց ցեղասպանության առնչող՝ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի

նամակագրության մի քանի նմուշներ, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում Գերմանիայի դեսպանի նամակը պետքարտուղարին և այլն:

Կ. Պոլսի հղված բազմաթիվ գեկուցագրերի, ինչպես նաև արդեն հետագայում ԱՄՆ-ի մասմուլում կոնկրետ փաստերի վերաբերյալ հրապարակումների հետ այս փաստաթրթերը համարդելու միջոցով կարելի է ստանալ Օսմանյան կայսրությունից մինչև ամերիկյան մամուլ (այստեղից՝ ամերիկյան լայն հասարակայնություն) ձգվող տեղեկատվական շղթայի հստակ պատկերը, ինչը օգնում է մեզ հականալու, թե ինչ է տեղի ունեցել Հայոց ցեղասպանության տարիներին, այդ ողբերգությանը աշխարհին տեղյակ պահելու համար:

Բերվող փաստական նյութից կարելի է դուրս բերել մի քանի գլխավոր թեմաներ, որոնք ըննարկման նյութ են փաստաթրթերի տարբեր հատվածներում: Բերվող վավերագրերում շղափվող կարևորագույն թեմաներից մեկը 1915թ. մերացրում արևմտահայության կրած տառապանքների նրանց տեղահանության, կոտորածների, նրանց դեմ գորածադրվող բռնությունների ու դաժանությունների մասին տեղեկատվությունն է, որի մասին Մորգենթաուն պարբերաբար ահազանգել է իր դեկավարությանը: Հայերի դեմ բռնությունների առաջին փուլի՝ զանգվածային ծերբակալությունների ու դրանց օրինականության երևույթի հավակնություն ունեցող նմանօրինակ այլ գործողությունները վկայություն է. Մորգենթաուի հղած առաջին տեղեկագրերից մեկը մայիսի 27-ի նրա գեկուցագրին էր, որում մասնավորապես տեղեկացվում է. «100-ից ավելի ականավոր հայեր [Կ. Պոլսուն, ապրիլի 24-ին] ծերբակալվել են հեղափոխական շարժումները կանխելու շինու պատրիվակով»: «Ինսպանը գեկուցագրում ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ ծերբակալվածների մեջ էր նաև ԱՄՆ-ի հպատակագրված քաղաքացի ունն Լևոն Չիրինցոնը, որի հարցը հատուկ հոգածության առարկա է եղել դեսպանի համար»:<sup>16</sup>

1915թ. ապրիլ-մայիս ամիսներին, երբ դեռ նոր էր ծայր առնում հայերի դեմ վաղօրոք մշակված դիվային ծրագրի իրականացումը ու Կ. Պոլսուն կարծես թե ամեն ինչ խաղաղ էր, թեև լարված, Հ. Մորգենթաուն դեռ թիւ էր պատկերացնում թե ինչ վերահաս ողբերգություն է պատրաստվում: Ամերիկյան դեսպանը, զրադշելով այս կամ այն ծերբակալվածի ճակատագրով, առանձին վայրերում տեղի

<sup>15</sup> R. Adalian, Le génocide des Arméniens dans les archives américaines ..., p 96.

<sup>16</sup> Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: The World War, Washington: 1928, file no. 867.4016/58.

ունեցած դաժանությունների դեմ բողոքելով, դեռ չեր տեսնում արտարուստ առանձին այդ երևոյթների ներքին կապը: Ըայցևայնպէս, նահանգներից դեսպանատոն հասնող տեղեկությունները լի էին հայերի հետագա ճակատագրի հանդեպ տագնապով: Ապրիլի 30-ին Հ. Մորգենքառի՝ պետդեպարտամենտին հղված գեկուցագրին կրցված է նաև նոյն օրը ստացված Զ. Չեքոսի՝ Հայեպի ամերիկան հյուպատոսի գեկուցագրիրը, որտեղ հայտնվում էր «կայսրության որշ շրջաններում հայերի հետապնդումների, բայանի և կրտորածների» մասին, արտահայտելով այն միտքը, որ դրանք «ոչ-բուրք և ոչ-իշխանական տարրերի դեմ ուղղված ճնշամիջոցների» մասն են կազմում:<sup>17</sup>

Հատկանշական է, որ նման ձևակերպում հետագայում նոյնպէս հանդիպում ենք նաև դեսպանի և ոչ միայն նրա գեկուցագրերում: Այս դեպքում, սակայն, ըստ ամենայնի, Մորգենքառուն դեռ նկատի չունի հայերի զանգվածային բնաջնջումը, քանի որ գեկուցագրում դեսպանը այն կարծիքն է հայտնում, որ տեղի ունեցող «ծայրահեղությունները» ավելի շուտ տեղական պաշտոնյաների կամայական գործողությունների հետևանք էին: Այդ ժամանակահատվածում, Մորգենքառի պատկերացմանք, տեղի ունեցող իրադարձությունները հայ-բուրքական բախում են իրենից ներկայացնում, բախում իշխող վերնախավի՝ «Սիություն և Առաջադիմություն կոմիտեի» և արևմտահայության միջև: Հայերը, ըստ Մորգենքառի, հանդիպավի են պատժվում, քանզի նրանց ճնշող մեծամասնությունը հավատարիմ է եղել օսմայան կառավարությանը: Այս զնահատականը թեև ունի ռազինալ կետեր, սակայն ընդհանուր առմամբ պարզունակ է, քանի որ հաշվի չեն առնվում Օսմանյան կայսրության յուրահատկությունները և այլ հանգամանքներ՝ կրոնական, ազգային, ժողովրդագրական և այլն: Մոտեցումը պարզունակ է նաև այն պատճառով, որ իր ժամանակին հատուկ «քաղաքացիական ազգ» հասկացությունը, որ ծագում էր այդ ժամանակավա Եվրոպական երկրներում և արդեն վաղուց հատուկ էր ԱՄՆ-ին, դեսպանը արհեստականորեն փորձում է կիրառել Խորքիայի դեպքում, ինչը հիմնավորապես սխալ է:

Տեղի ունեցող Հայոց ցեղասպանության դրդապատճառների մասին Մորգենքառի տեսակետների աստիճանական վերափոխումը նկատելի է գեկուցագրից գեկուցագրի: Այսպես, 1915թ. մայիսի 25-ին դեսպանի գեկուցագրիրը պարունակում է հայերի ողբերգության

արմատների մասին նրա հայեցակետների մանրամասն շարադրանքը: Ըստ դեսպանի, հայերը հուսախարվել էին օսմանյան հեղափոխությունից և ընդդիմադիր դիրք էին գրավել կառավարության նկատմամբ: Այդ ընդդիմությունը, սակայն, ինչպես բազմաթիվ այլ հակաիշքիհաղական տարրերի մոտ, պասիվ էր և հուսահատ: Ընդհանուր առմամբ, ըստ Մորգենքառի, հայերը լոյալ են եղել կառավարության նկատմամբ և Վանի «ապստամբությունը» բնդիմունքը բացառություն էր և հուսահատ դեպք: Դեսպանը, թերևս բուրքական աղբյուրների ազդեցության տակ, նշում է, որ «ապստամբների» թիվը «հավանաբար 25000 է», սակայն միաժամանակ նախազգուշացնում պետդեպարտամենտին, որ լիովին արժանահավատ տեղեկություններ չկան՝ իշխանությունների հարուցած անհաղթահարելի խոշընդուների պատճառով:

Հարունակելով գնահատել տեղի ունեցող տարագրությունների պատճառները, դեսպանը նշում էր, այս անգամ հենվելով սեփական վստահելի աղբյուրների վրա, որ այդ գործողությունները «նպատակ ունեին ցիրուցան անել հոծ բնակվող հայ բնակչությանը» ... և հասնել նրանց լրիվ հնազանդությանը՝ նրանց զուտ բուրքարնակ զյուղերում վերաբնակեցնելով, որը նրանց, անշուշտ ծանր գրկանքներ էին սպասում: Մորգենքառի միաժամանակ ավելացնում է, որ երկու կողմերն էլ (նկատի ունի հայերն ու կառավարությունը) վախենում են միմյանցից:<sup>18</sup> Վերաբնակեցնան այս լավատեսական տեսակետը՝ որոշ խմբագրություններով, թերևս պաշտպանեն այսօրվա բուրքական կեղծարարները, սակայն վիատարդերի հետագա ուսումնասիրումը վկայում է դեսպանի տեսակետների աստիճանական զարգացման մասին:

Եթե այս և նախորդ գեկուցագրերում Մորգենքառուն ինչ-որ, թեկուզ և թիզ, չափով փոքրում է հասկանալ կամ արդարացնել կառավարության դիրքորոշումը, ապա հաջորդող գեկուցագրերում նման բան այլևս չկա: Ընդունելով հանդերձ, որ գործադրվող միջոցները պատճամիջոցներ էին (ավելի շուտ զուցադրական քան իրական), այդ գեկուցագրերում նշվում է, որ դրանք հայերի իրական կամ ենթադրական «մեղավորության» համեմատ անհամամասնորեն խիստ են եղել:

Մինչդեռ դեպքերի անմիջական վայրերում գտնվող ավելի ցածր պաշտոն զբաղեցնող դիվանագետների և այլ անձանց հեղի-

<sup>17</sup> Papers Relating ..., file no. 867.4016/59.

<sup>18</sup> Papers Relating ..., file no. 867.4016/71.

նակած վավերագրերում տրվում են առավել իրատեսական և համարձակ գնահատականներ՝ ստեղծված իրավիճակի վերաբերյալ: 1915թ. ապրիլին Կ. Պոլսում գտնվող Հ. Մորգենթաուին դժվար էր պատկերացնել, որ ինքը ժամանակակիցն էր դառնում պատմության մեջ եզակի ողբերգության: 1915թ. ապրիլի 21-ին Հալեայի ամերիկյան հյուպատոսի գեկուցագրի ներդիր-նամակում՝ Այնթապից դր. Քարույան Համիլրոնն ու դր. Ռենին արդեն գրում էին «քրիստոնյաների դեմ ուղղված ընդհանուր ծրագրի մասին»:<sup>19</sup> Ավելին, զուգահեռներ էին անցկացվում այդ և 1896-ի ու 1909-ի կոտորածների միջև և նշվում էր, որ գնագամային տեղահանությունը «կոտորածի իրականացման տարատեսակ է»:<sup>20</sup>

Իսկ Մերսինում ԱՄՆ-ի հյուպատոս Նարանը 1915թ. մայիսի 28-ին հեռագրում է Մորգենթաուին. «Տեղահանումների վախճ ու արդեն տեղահանվածների կրած տառապանքներն ու կորուտները բավական են հայերին հետև պահելու կառավարության դեմ ցանկացած գործողությունից, անգամ եթե այդպիսից ծրագրվել են»:<sup>21</sup>

Այնուամենայնիվ, թեև դանդաղորեն, ականատեսներին աստիճանաբար պարզ է դառնում, որ Երիտրուրքական կառավարության նպատակը հայերին ենթադրյալ դավաճանության համար պատժելը չէ, այլ ոչ ավելին, ոչ պակաս, քան հայ ազգը Օսմանյան կայսրությունում բնաջնջելը: Կառավարող շրջանների այդ հանցագործ մտադրությունների մասին ահազանգողների շարքերում առաջնական ներկայական է Հալեայի ամերիկյան հյուպատոս Զ. Ջեքսոնն էր, և դա պատահական չէ, քանի որ Հալեայում 1915թ. մայիսից արդեն կարելի էր ականատես լինել տեղահանյաների ոլքայի վիճակին և լինել նրանց պատմած սարսափելի պատմությունները: Հունիսի 5-ին հյուպատոսը Մորգենթաուին հղված իր գեկուցագրում նշում է, որ տարբեր մարդկանց ջանքերը՝ վերջ դնելու բռնություններին, արդյունք չեն ունենում: «Սա, անկասկած, հայ ազգը իսպառ ոչնչացնելու մանրամասն կանխամտածված ծրագիր է», - իր գնահատականն է

<sup>19</sup> *United States Official Documents on the Armenian Genocide, Vol. I: The Lower Euphrates*, compiled and introduced by A. Sarafian, Watertown, Mass.: Armenian Review, 1993, p. 8.

<sup>20</sup> Ibid.

<sup>21</sup> *United States Official Documents on the Armenian Genocide, Vol. III: The Central Lands*, compiled and introduced by A. Sarafian, Watertown, Mass.: Armenian Review, 1995, p. 79.

տալիս ամերիկյան հյուպատոսը:<sup>22</sup>

Արդեն թափ առնող հայերի գանգվածային կոտորածների ու տեղահանությանը գնահատական տալու հարցում կամաց-կամաց սկսվում է փոխվել նաև Հ. Մորգենթաուի դիրքորոշումը: Ինչքան էլ Կ. Պոլսում այդ գործողությունները հայերի դեմ սահամանավակակ ճնշամիջոցների պատրանքն ունենային, այնուամենայնիվ, նահանգներից դեսպանատուն հասնող հաղորդագրերը գնալով ավելի սարսափելի տեղեկություններ էին հաղորդում:

1915թ. հունիսի 30-ին՝ Խարբերդից հայերի առաջին խմբի տեղահանման նախորդ օրը, քաղաքի ամերիկյան հյուպատոս Լ. Դեկիր իր գեկուցագրում աներկայորեն նշում է, որ ծրագրվող տեղահանումը նշանակում է տեղահանյալների ճնշող մեծամասնության ստույգ մահ և հայկական վեց վիլայեթների՝ ըստ հյուպատոսի 1000000 հայ բնակչության տեղահանումը մի ծեռարկ է, որ պատմության մեջ «զորգահեռ չի ունեցել»:<sup>23</sup> Փաստորեն, ըստ հյուպատոսի դիպուկ գնահատականի՝ ընտրվել էր կոտորածի առավել արդյունավետ ձևը՝ զանգվածային տեղահանումը:<sup>24</sup>

Հ. Մորգենթաուի հունիսի 10-ի գեկուցագիրը արդեն պարունակում է տեղի ունեցող իրադարձությունների առավել խորաքափանց գնահատական: Չեկուցագրում մեջքերում է արվում Դեկիր Վերոհիշյալ գեկուցագրից՝ «ինչպես երևում է՝ գոյություն ունի հայ ազգը խորտակելու սիստեմատիկ ծրագիր»:<sup>25</sup> Ինչ-որ առումով կրկնելով նախկին, ոչ-իրատեսական գնահատականները, այս է՝ հայերն ու թուրքերը մի ժամանակ ապրել են համերաշխ, հայերը օգնել են ոռուներին գրավելու Վանը և այդ պատճառով, թեև անարդարացի, վրեժ է լուծվում, դեսպանը նաև ընդգծում է, որ հայերի ճնշող մեծամասնությունը անմեղ է և հավատարիմ և նրանց դեմ շինծու մեղադրաններ են ուղղվում:

Ինչպես իր հողվածում նկատում է Ռ. Աղայանը, հունիսի 10-ի գեկուցագրում Մորգենթաուի մի կարևոր արտահայտություն կարծես

<sup>22</sup> *United States Official Documents on the Armenian Genocide, Vol. I: The Lower Euphrates*, compiled and introduced by A. Sarafian, Watertown, Mass.: Armenian Review, 1993, p. 20.

<sup>23</sup> *United States Official Documents on the Armenian Genocide, Vol. II: The Peripheries*, compiled and introduced by A. Sarafian, Watertown, Mass.: Armenian Review, 1994, p. 3.

<sup>24</sup> Ibid., p. 4

<sup>25</sup> Papers Relating ..., file no. 867.4016/74.

կրկնում է մայիսի 24-ին՝ Դաշնակից կառավարությունների բնդունած հայոտարարության տեքստի մի հատված: Նշելով, որ փորձ է արվում հայերին Օսմանյան կայսրությունում արճատախիլ անել, և թվարկելով հայերին պատուհասած բազմարիվ բռնությունները, դեսպանը ընդգծում է, որ «այդ գործողությունները ... լրիվ կամայական են և ուղղորդվում են Կ. Պոլսից՝ ուազմական անհրաժեշտության պատրդակով», փաստորեն՝ այն, ինչ ասկում էր վերոհիշյալ փաստարդում:<sup>26</sup>

Հուլիսի 16-ին Սորգենքառի ուղարկած գեկուցագիրը, իշխանական բնակատում է Ռ. Ադալյանը, թերևս 20-րդ դարում առաջին անգամ նաև բարձրաստիճան պաշտոնյայի կողմից մի ազգի նկատմամբ տեղի ունեցող ցեղասպանության մասին ուղղակի վկայությունն է: Նրանում Սորգենքառն, առանց դիվանագիտական այլևալությունների նշում է. «ընթացքի մեջ է մի ազգի ոչնչացման գործընթաց»:<sup>27</sup>

Միաժամանակ, մեզ հետաքրքրող կարևորագույն հարցերից է Հայոց ցեղասպանության այսպես կոչված «ամերիկյան արձագանքը»: «Ամերիկյան արձագանք» հասկացությունը ճիշտ կիմներ բաժանել երկու՝ բավական տարբեր հատվածների: Դրանցից առաջինը կարելի է անվանել «պաշտոնական արձագանք»՝ այն գործողությունների ամբողջությունը, որը կատարվել է ԱՄՆ-ի պաշտոնյաների կողմից ԱՄՆ-ում կամ Թուրքիայում հայերին փրկելու ուղղությամբ: Երկրորդը՝ ի տարբերություն առաջինի կատարվել է ոչ պաշտոնական, մասնավոր անձանց՝ հիմնականում միսիոններների կողմից, մեծ մասամբ հայերին մարդասիրական օժանդակություն ցույց տալու տեսքով: ԱՄՆ-ի պաշտոնական արձագանքի մասին վկայող հատվածներ պարունակվում են Հայոց ցեղասպանությանը վերաբերող ամերիկյան վավերագրերի առաջին իսկ ննույներից (1915թ. ապրիլ-մայիս): ԱՄՆ-ը, որն իրու շեզոք պետություն, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում ներկայացնում էր նաև վերջինիս դեմ պատերազմանող Ռեժիսուրանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի հետազայում նաև Իտալիայի շահերը, իր վրա էր վերցրել նաև այդ երկրում ոչ-մուսուլմանների պաշտպանության հոգսը, մի քանի, որը ավանդաբար Թուրքիայում կատարում էին վերոհիշյալ երկրները՝ մասնավորապես առաջին երկուսը: Զննյած 19-րդ դարում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը ուղղորդած «Մոնրոյի դրվագինին», որը ԱՄՆ-ին հեռու էր պահում «Հին

աշխարհից», ԱՄՆ-ի այդ կարգավիճակը նրան մղում էր ակտիվ միջոցներ ձեռնարկել քորքական իշխանությունների կողմից ոչ-մուսուլման փորքամասնությունների դեմ սաստկացող բռնությունները խոչընդոտելու համար: Եթե ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչներին ընդիհանուր առմամբ հաջորդվեց պաշտպանել պատերազմող երկրների քաղաքացիների շահերը Խորքիայում, ապա հայերի հարցում նրանք բախվեցին անհաղթահարելի խոչընդոտների, քանզի այստեղ խոսր վերաբերում էր ոչ թե Եպիփոնիկ բռնությունների, այլ կանխանածվածված և հետևողականորեն իրականացվող մի ազգի ցեղասպանությանը:

Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործվող բռնությունների սաստկացման մասին առաջին տեղեկություններին պետքեապարտամենտը արձագանքեց Կ. Պոլսում ամերիկյան դեսպանին հրահանգելով, որպեսզի նա ներազի քորքական կառավարության վրա՝ հայերի նկատմամբ բռնաճնշումները դադարեցնելու նպատակով:<sup>28</sup> Իրականում 1915-ի գարնանը թե՛ դեսպանը և թե՛ առավել ևս պետքեապարտամենտում իրենց հաշիվ չեն տալիս, որ այդ գործողությունների ծրագրուն ու իրականացումը կազմակերպող հենց իրենք՝ քորքական իշխանություններն էին:

ԱՄՆ-ի դեսպան Հ. Սորգենքառն Հայոց ցեղասպանության առաջին ամիսներից իսկ ակտիվ դիրք էր գրավում հայերի շահերի պաշտպանության հարցում, այդ նպատակին հասնելու համար գործադրելով տարբեր մուտեցումներ: Մանավանդ առաջին պահերին դեսպանի ջանքերը հաճախ ուղղված էին առանձին անհատների պաշտպանությանը, մասնավորապես նրանց, ովքեր կապված էին Օսմանյան կայսրությունում գործող ամերիկյան հաստատությունների հետ: Հայերի՝ իբրև ամբողջական միավորի պաշտպանության հարցում Սորգենքառն, բացի իր անձնական միջնորդություններից, որոնք կրում էին ոչ-պաշտոնական բնույթ, ջանքեր էր գործադրում նաև այս հարցին Կ. Պոլսում հավատարմագրված այլ երկրների դիվանագիտական ներկայացուցիչների ուշադրությունը քենուելու նպատակով: Այս հարցում, ինչպես Սորգենքառն իրավամբ նշում է, առանձնակի կարևորություն ուներ Գերմանիայի դեսպանի դիրքը, որի հետ բազմարիվ հանդիպումների մասնամասն շարադրանքը գտնում ենք Սորգենքառի հուշերում: Իր գեկուցագրերից մեկում Սորգենքառն այն կարծիքն է արտահայտում, որ ստեղծված իրավի-

<sup>26</sup> Adalian, Le génocide ..., p. 100.

<sup>27</sup> RG 59, 4016/76, թերփում է քսան R. Adalian, Le génocide ..., p. 100.

ճակում միայն Գերմանիան է ի վիճակի կանգնեցնելու հայերի դեմ ծավալված բռնարշավը.<sup>29</sup> Սակայն Մորգենթաուն այդ հարցում հաջողության չի հասնում. Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը հրաժարվում է այս հարցով «Թուրքիայի ներքին գործերին միջամտելուց»: Հուլիսի 10-ի իր գեկուցազրում Մորգենթաուն նշում է, որ ինը գերմանական դեսպանին հասկացնել է տվել, որ իր կառավարությունն ու անձամբ ինը տեղի ունեցող ողբերգությունում մերի իրենց բաժինը կունենան: <sup>30</sup> Այդ է պատճառը, թերևս, որ դեսպանը պատրանքներ չի տածում մի քանի օր դրանից առաջ՝ հուլիսի 4-ին գերմանական դեսպանի ներկայացրած հուշագրի առքիվ, այդ մասին այն կարծիքը հայտնելով պետդեպարտամենտին, որ այդ փաստաթուղթը սոսկ արձանագրության համար է և նպատակ ունի Գերմանիան ազատել պատասխանատվությունից: <sup>31</sup> Այսուամենայնիվ, դեսպանը, օգտվելով այն հանգամանքից, որ Վանգենհայմը մի քանի շաբաթով մեկնեց Թուրքիայից, փորձեց լեզու գտնել նրա փոխանորդի՝ Հոհենլոեի հետ, ակնկալելով նրանից համագրծակցություն այս խնդրում: Դեսպանի փոխանորդը, խկապես, հերթական հուշագիր-բողոքը ներկայացրեց քուրքական կառավարությանը, սակայն դրանից, միևնույն է իրավիճակը չփոխվեց, մասնավանդ Բեռլինում հավանություն չէին տալիս իրենց դաշնակից Թուրքիայի հասցեին կտրուկ հայտարարություններին:

Պետդեպարտամենտը, նույնպես, ինչպես և դեսպանը, կարևորել է այս հարցում գերմանական դեսպանությանը, նրա միջոցով և՝ Գերմանիայի բռնած դիրքը: Այսպես, երբ ամերիկան դեսպանը հեռազրեց ԱՄՆ-ի պետդեպարտամենտին, որ «գերմանական դեսպանը խիստ բողոք է ներկայացրել Բ. Դուանը», <sup>32</sup> ԱՄՆ-ի արտաքին քաղաքական գերատեսչությունը հեռագիր-հարցում հեց դեսպանին՝ «Արյո՞ք գերմանական դեսպանի բողոքը բարեկալել է իրավիճակը»:<sup>33</sup>

Մորգենթաուի այն պնդումը, որ Գերմանիայի նմանօրինակ դեմարշները լոկ նպատակ ունեին աշխարհին հավատացնելու, որ

<sup>29</sup> Papers Relating ..., file no. 867.4016/74.

<sup>30</sup> Ibid.

<sup>31</sup> Այդ մասին ավելի մանրամասն տես H. Morgenthau, *Ambassador Morgenthau's Story*, Garden City, NY, 1918, pp. 374-375.

<sup>32</sup> Խոսքը վերաբերում է 1915թ. օգոստոսի 9-ին ներկայացրած հուշագրին, տես 867.4016/91.

<sup>33</sup> Papers Relating ..., file no. 867.4016/91.

Գերմանիան ոչ մի մեղսակցություն չունի տեղի ունեցած ոճրին, հաստատվում են գերմանացի դիվանագետների հետագա գործողություններով: Այսպես, երբ 1915թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ԱՄՆ-ի մասնությունը կայսորեն արձագանքեցին հայերի ողբերգությանը և այդ առիթով մի կողմից իրեւ մեղսակից, իսկ մյուս կողմից իրեւ այս խնդրում գործուն լծակների տիրապետող միակ երկիր մատնանշվում էր Գերմանիան, ԱՄՆ-ում Գերմանիայի դեսպան Բեռլինստորֆը, ի պատասխան այդ մեղադրանքների պետքարտուղարին է ներկայացնելու մի հեռագիր: Այս հեռագրում դեսպանը ներկայացնում է նոյն քականի օգոստոսին Բ. Դուանը ներկայացրած գերմանական դեսպանի հուշագիր-բողոքը, որում ընդգծվում էր, որ Գերմանական կառավարությունը իրաժարվում է «այդ սարսափելի արարքներից բխող որևէ պատասխանատվությունից և կտրականապես ժխտում այն կարծիքը, որ Գերմանիան կարող է դրամակ կամ արդարացրած լինել նման գործողությունները»:<sup>34</sup>

ԱՄՆ-ի դեսպանը, ինչպես երևում է նրա գեկուցագրերից, փորձել է նաև համոզել այլ երկրների՝ Իտալիայի, Բուլղարիայի, Նիդեռլանդների դեսպաններին, միանալու հայերի նկատմամբ ծավալված բռնությունների դեմ բողոքելու ջանքերին: Մորգենթաուն նաև մի քանի գեկուցագրերում նկարագրում է Ավստրո-Հունգարիայի դեսպանի հետ այդ կապակցությամբ տեղի ունեցած գրույցների մասին, որոնք սակայն, չնայած ավստրիական դեսպանի համեմատական քարեհաճությանը, նոյն արդյունքն են ունեցել, ինչ գերմանական դեսպանի հետ առանձնագրույցները:

Սակայն հայերի դեմ բռնությունները կանխելու գործում այլ երկրների դեսպանների աջակցությունը շահելը դեսպանի գործունեության ընդհանունը մի կողմն էր: Մորգենթաուն նաև ինքն է սեփական նախաձեռնություն ցուցաբերել, հաճախ պետդեպարտամենտին առաջարկելով հնարավոր քայլեր: Դեսպանը հուլիսի 10-ի իր գեկուցագրում նշում է, որ հայերի հալածանքը մեղմելուն ուղղված քայլեր ձեռնարկելու խնդրով ինքը խորհրդակցել էր բազում տարիներ մուրքիայում ապրած ամերիկացի միսիոններների հետ, որոնք սակայն դժվարացել են որևէ խորհրդադարձ տալ: <sup>35</sup> Նմանապես դժվարացել է խորհրդադարձությունների զարգացմանը պասիվ հետևելու դիրքությունը էր իրադարձությունների զարգացմանը պասիվ հետևելու դիրքությունը:

<sup>34</sup> Papers Relating ..., file no. 867.4016/173.

<sup>35</sup> Papers Relating ..., file no. 867.4016/74.

ոռշում: Հոլիսի 16-ին, ի պատասխան Մորգենթաուի՝ Վերոհիշյալ զեկուցագրի և նրա խնդրանքի՝ իրեն առաջարկությունները տալ ստեղծված իրադրության վերաբերյալ, պետդեպարտամենտը նրան նոր ոչինչ չի առաջարկում՝ հավանություն տալով մինչ այդ նրա ընդունած գործելակերպին:

Սակայն մյուս կողմից պետդեպարտամենտի նկատմամբ էլ եր գործադրվում ճնշում՝ հայերի նկատմամբ բռնությունները կանխելու համար ամեն հնարավոր անելու խնդրանքով: Պետդեպարտամենտը, սակայն իր հիմնավորումներն եր բերում, համաձայն որոնց հայերին պաշտպանելը բարդացել է, քանի որ «այդ ազգի հոծ զանգվածներ զինված ապստամբության մեջ են բուրքական կառավարության դեմ»:<sup>36</sup> Փաստորեն, հայերին օգնելը, ըստ պետքարտությարի, կնշանակեր օգնել խոռվարաններին, պնդում, որը ձեռնուու էր պետդեպարտամենտին, սակայն իրականությանը, մեղմ ասած չեր հանապատասխանում: Մորգենթաուն, օգոստոսի 11-ի իր գեկուցագրում ներկայացնում է երեք կետից բաղկացած գործողությունների մի ծրագիր, որոնցում բացի բուրքական և գերմանական կառավարությունների վրա ներգրծումներից, առաջարկում էր պայքարել՝ տառապյալ հայերին անհապաղ օգնություն հասցնելու իրավունք ստանալու հարցում: Ըստ դեսպանի վերջին կետը ամենակարևորն էր և որը ինքնին կենթադրեր ԱՄՆ-ի բողոքող դիրքորոշումը:<sup>37</sup>

Միակ առաջխաղացումը այս հարցում ԱՄՆ-ի հոկտեմբերի 4-ի ոչ-պաշտոնական բողոքն էր, որով պետքարտությար Լանսինգը հրահանգում էր Մորգենթաուին՝ փոխանցել բուրքական կառավարությանը, որ հայերի նկատմամբ հալածանքները «փ չիք են դարձնում բարեկանության այն զգացումը, որ ԱՄՆ-ի ժողովուրդը տածել է Թուրքիայի հանդեպ»:<sup>38</sup> Սակայն սա այն վերջակետն էր, որից այն կողմ ԱՄՆ-ը չգնաց Թուրքիայի դեմ իր բողոքներում:

Իրականում այս և նմանօրինակ հայտարարությունները ի վիճակի չին հետ պահել Թուրքիային իր ցեղասպան ծրագրի իրականացումից, քանի դեռ իրական լծակներ չին գործի դրվում: Այդ մասին Հ. Մորգենթաուն պետդեպարտամենտին ուղղված հուլիսի 16-ի իր գեկուցագրում հստակորեն նշում է. «Քողոքներն ու սպառնալիքները անօգուտ են և թերևս դրդում են օսմանյան իշխանավորներին ձեռնարկելու առավել խիստ միջոցներ ... Ես կարծում են, որ ոչինչ

բացի ուժից, ինչը ԱՄՆ-ը ակնհայտորեն ի վիճակի չի գործադրելու, չի կարող շտկել իրավիճակը»:<sup>39</sup>

Ամերիկյան կողմը ուժի չդիմելու համար ուներ իր բացատրությունը: Այսպես, 1915թ. նոյեմբերի 4-ին Մերսինում ԱՄՆ-ի հյուպատոս Նաբանի՝ Հ. Մորգենթաուին հրված գարտնի գեկուցագրում, հյուպատոսը անդրադառնալով ԱՄՆ-ում Սեծ Բրիտանիայի նախկին դեսպան Ջ. Բրայսի ԱՄՆ-ին ուղղված կոչմն՝ ճնշում գործադրել մուրքիայի վրա, որպեսզի վերջինս հայերի նկատմամբ բռնությունները դադարեցնի, ներկայացնում է մի քանի փաստ ոչ հեռու անցյալից: Հիշեցնելով, որ 1909թ., երբ Եվրոպական ռազմանավերը Մերսինի մոտ խարիսխ էին ծգել, Արանայում անարգել շարունակվում էր հայերի կոտորածը, իսկ բրիտանական հյուպատոսի խնդրանքը հայերին՝ հանձնել գենքերը, խարեւություն գրւս եկավ, հյուպատոսը՝ հույս հայտնելով հանդերձ, որ ԱՄՆ-ի միջամտությունը օգտավետ կինի, միաժամանակ դատապարտում է Եվրոպական տերությունների վորո՞ը՝ ԱՄՆ-ի վրա բարդելու հայերի պաշտպանության պատասխանատվությունը:<sup>40</sup>

Սակայն դրա փոխարեն ԱՄՆ-ը ի վիճակի էր ոչ-պաշտոնապես նպաստել հայերի դեռևս կենդանի հատվածների փրկությանը: Այդ նպատակով, թերևս, ավելի հարմար էին դեսպանին և ավելի ցածր պաշտոնյաների միջնորդությունները, քան ասենք պետդեպարտամենտի պաշտոնական միջամտությունը: Ինքը՝ պետդեպարտամենտը այդ գործողություններին մասնակցում էր ոչ-պաշտոնապես, ստվերում, սակայն բավական արդյունավետ կերպով:

Մորգենթաուի ջանքերը՝ փրկելու հայության այս կամ այն հատկածին ունենում էին փոփոխական հաջողություն. բուրքական իշխանությունների տված խոստումները մեծավ մասամբ կեղծ էին դրւս զալիս: Օգոստոսի 18-ին Մորգենթաուն հաղորդում էր Վաշինգտոն, որ իրեն հաջողվել է բուրքական իշխանություններից կորզել կարողիկ և բողոքական հայերին տարագրությունից ազատելու խոստում,<sup>41</sup> որը սակայն մնաց թղթի վրա: Սակայն, ինչ վերաբերում էր նույն գեկուցագրում նշվող՝ ամերիկյան հյուպատոսարանների հայ

<sup>39</sup> RG 59, 867.4016/76, in R. Adalian, *le génocide ...*, p. 100.

<sup>40</sup> *United States Official Documents on the Armenian Genocide, Vol. II: The Peripheries*, compiled and introduced by A. Sarafian, Watertown, Mass.: Armenian Review, 1994, pp. 99-100.

<sup>41</sup> Papers Relating ..., file no. 967.4016/99, այդ մասին տես նաև *New York Times*, 25 August.

<sup>36</sup> Papers Relating ..., file no. 867.4016/341.

<sup>37</sup> Papers Relating ..., file no. 867.4016/341.

<sup>38</sup> Papers Relating ..., file no. 867.4016/218a.

ծառայողներին տարագրությունից ազատելու խոստմանը,<sup>42</sup> վերջինս հիմնականում կատարվեց, քանզի այս հարցում ԱՄՆ-ի հետաքրքրությունը անմիջական էր:

Հիմնովին բնաջնջվելու եզրին գտնվող արևմտահայության փրկության մեկ այլ ուղի էր Օսմանյան կայսրության տարածքից հեռանալը, ուղղություն, որով աշխատում էր նաև ԱՄՆ-ի դեսպանը: Օգոստոսի 11-ի գեկուցագրում դեսպանը նշում էր, որ բուրքական կառավարության որոշ անդամներ համաձայնել են բույլատրել Կ. Պոլսի հայերին՝ հեռանալ, եթեք չվերադառնալու պայմանով:<sup>43</sup>

Մորգենքառուն նաև հղացել էր մինչ այդ պահը կենդանի մնացած հայերին ԱՄՆ տեղափոխելու գաղափարը: Դրանով, իսկապես, հայերի մի հատկած կփրկվեր ֆիզիկական բնաջնջումից, իսկ նյուս կողմից էլ կշահեր ԱՄՆ-ը՝ քանի որ աշխատանքը և քանիմաց հայերը մեծ օգուտ կարող էին տալ ԱՄՆ-ի տնտեսությանը: Այս հարցում դեսպանը փորձում է օգտագործել իր սերտ կապերը ամերիկյան միավոներական շրջանների հետ: Դեսպանը՝ 1915թ. սեպտեմբերի 3-ին ներկայացրած իր գեկուցագրում լավատեսորեն էր տրամադրված այդ հարցում, և առաջարկում էր ստեղծել ազգեցիկ անդամներով մի կոմիտե՝ ԱՄՆ-ում, որի նախառակի պիտի լիներ օժանդակել հայերի գանգվածային ներգաղթը ԱՄՆ:<sup>44</sup> Այդ հարցում լավատեսորեն էր տրամադրված նաև ամերիկյան մասով: «Նյու Յորք Թայմսում» մինչև անգամ մի հոդված լույս տեսավ՝ «Այստեղ կուղարկվեն 550000 հայեր» լավատեսական խորագրի ներքո:<sup>45</sup> Սակայն այդ լավատեսությունը ավելի քան անհիմն էր: Իրականում բուրքական կառավարությունը չէր ցանկանա հայերին թուրքիայից անվեսա հեռանալը՝ թեկուզ հայերի դեմ անլուր դաժանությունները աշխարհից հնարավորին շափ քարցնելու դիտավորությամբ: Մյուս կողմից՝ այդ հարցը գուտ տեխնիկապես դժվար էր իրագործել, քանի որ Թուրքիայի ափերը շրջափակված էին կամ ականապատված, իսկ աքսորյալ հայերի մի ստվար հատկած ստիպված կլիներ երկար ճանապարհ կտրել ծովափ հասնելու համար: Ինչպես Մորգենքառուն էր հետազոտում նշում, շատ քերին հաջողվեց ստանալ Թուրքիայից հեռանալու իրավունք,<sup>46</sup> էլ ավելի քերն էին ներգաղթել ԱՄՆ այդ տարիներին:

1915-1916թթ. Օսմայան կայսրությունից ԱՄՆ ներգաղթի ծավալը շեշտակիորեն անկում ապրեց՝ համարյա դադարելով:<sup>47</sup>

Այդ բազմարիվ դժվարությունները նկատի ունենալով՝ սեպտեմբերի 22-ի պատասխան հեռագրում պետքեարտամնանը նշում է, որ «[շահազդիլո] կողմերը զգում են, որ հայերի զանգվածային ներգաղթի ճանապարհին եղած խոշընդուները անհաղթարեկի են», քայլ միաժամանակ հարցում կատարում, թե արդյոք դեսպանն ի վիճակի է «ամենաարդյունավետ ձևով» տնօրինել 50-100000 դոլար:<sup>48</sup>

Այսպիսով հայերի օգնության ռազմավարության մեջ ընդունվեց իրավիճակին ամենաշատը հարմարեցված սխեմա՝ օգնության կազմակերպումը տեղում և այդ նպատակով դրամահավաքների անցկացումը ԱՄՆ-ում: Մորգենքառուի խորհրդով ստեղծված Հայերի և սիրիացիների օգնության կոմիտեն (նախագահ՝ Զ. Բարտոն) իսկապես կատարեց անգնահատելի աշխատանք ԱՄՆ-ում ծավալելով հայերի օգտին դրամահավաքի լայն արշավ՝ հավաքելով զգակի նյութական միջոցները:<sup>49</sup> Սակայն բարդությունը այդ միջոցների բաշխումն էր, ինչը ծայր աստիճան բարդացվում էր բուրքական իշխանությունների հարցում բազմաթիւ խոշընդուների պատճառով: Այդ խոշընդուները անհաղթահարեկի էին ամերիկյան միսիոններների համար, մանական Օսմանյան կայսրությունում դեռ 1914թ. աշնանից կապիտուլացիաների վերացումը հաշվի առնելով: Այս պարագայում ևս, ինչպես տեղեկատվության հաղորդման դեպքում, Օսմանյան կայսրությունում հավատարմագրված ամերիկյան դիվանագետներն ու դեպատագարտամենտը ամերիկյան միսիոններներին անգնահատելի օգնություն ցուցաբերեցին: Ինչպես նշում էր «Նյու Յորք Թայմս» սեպտեմբերի 24-ի համարում, մի քանի օր դրանից առաջ տեղի էր ունեցել հանդիպում օտարերկյա միսիաների լիազորների ամերիկյան խորհրդի բարտուղար Զ. Բարտոնի, Կ. Պոլսի ամերիկյան նորերու քուեցի խորհրդի տնօրին Զ. Քրեյսի և պետդեպարտամենտի ներկայացուցիչների մասնակցությամբ: Խորհրդակցության ընթացքում բննարկվել էր ամերիկյան ժողովրդի կողմից հայերին ցույց տրվող օգնության ծրագիրը, որին սակայն պետդեպարտամենտի

<sup>42</sup> Papers Relating ..., file no. 867.4016/90.

<sup>43</sup> Papers Relating ..., file no. 867.4016/90.

<sup>44</sup> Papers Relating ..., file no. 867.4016/117.

<sup>45</sup> New York Times, 14 September.

<sup>46</sup> Papers Relating ..., file no. 867.4016/162.

<sup>47</sup> Sir Gordon, *American Relations...*, p. 308, tab. 21.

<sup>48</sup> Papers Relating ..., file no. 867.4016/117.

<sup>49</sup> Այդ մասին տես J. Grabill, “Protestant Diplomacy and the American Mandate for Armenia, 1914-1920,” in *Recent Studies in Modern Armenian History*. Cambridge, MA: Armenian Heritage Press, 1972, pp. 56-58.

մասնակցությունը ոչ-պաշտոնական կարգավիճակով էր:<sup>50</sup> Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանատունը, փաստորեն դարձավ այն տարանցիկ կետը, որի միջոցով տեղահանյալ հայերին էին հասցվում ԱՄՆ-ում հավաքված նյութական միջոցները, մասնավորապես՝ դրամը: Ինչպես վկայում էր «Նյու Յորք Թայմս», հոկտեմբերի 8-ին արդեն Հայերի կոտորածների ուսումնասիրման կոմիտեն հայերին օգնելու նպատակով ԱՄՆ-ում հավաքված 100000 դրամ էր փոխանցել Հ. Մորգենթաուին՝ այն հետագայում տեղում վերաբաշխելու նպատակով:<sup>51</sup>

Սակայն դրանով չէին վերջանում բարդությունները: Խորքական իշխանությունները հայտարարում էին, որ օգնության բաշխումը Թուրքիայի ներքին գործն է և պետք է տնօրինվի իրենց կողմից: Սրան անշուշտ, կտրականապես դիմ էին ԱՄՆ-ի ներկայացուցիչները, որոնք մինչև վերջ պայքարեցին իրենց կողմից այդ միջոցները բաշխելու իրավունքի համար և անզամ ստիպված եղան բաշխել դրանք ընդհատակյա՝ բուրքական իշխանությունների ցանկությանը հակառակ: Հայեպում ամերիկյան հյուպատոս Զ. Չերտնը, օրինակ, միանշանակ հայտարարում էր, որ «քարդությունը նրանում է, որ քուրքական կառավարությունում զիսավոր դեր ունեցող տարրերը դեմ են օժանդակության բացահայտ վերահսկմանը օտարերկրացիների կողմից»:<sup>52</sup> Հետագայում հյուպատոսը նշում էր, որ իշխանությունները ձերքակալել էին հայերին օգնություն բաշխող մի քանի անձանց: Այնուամենայնիվ, հյուպատոսը վճռականաբար հայտարարում էր, որ օգնությունը «կշարունակվի, քանի կան միջոցներ: Ես բազմաթիվ կյանքեր եմ փրկել և կշարունակեմ, քանի հետևանքները կլինեն որբայի, եթե այդ օժանդակությունը դադարի»:<sup>53</sup> Դա շարունակվեց ընդիուպ մինչև Խորքիայի հետ ԱՄՆ-ի դիվանագիտական կապերի խզումը 1917թ. ապրիլին, որից հետո էլ անզամ մի քանի տասնյակ ամերիկյան միսիոններներ մնացին Օսմանյան կայսրության տարածքում՝ փորձելով օգտակար լինել հայությանը, թեև այս խնդրի լուծումը անհամենատ բարդացել էր:

Այսպիսով, ամփոփելով, բերվող փաստաթղթերի ներկա վերլուծությունը, մեկ անզամ ևս անհրաժեշտ է նշել դրանց կարևորու-

թյունը մի քանի առումներով: Նախ այս փատարդերը Հայոց ցեղասպանության մասին ամերիկյան վավերագրերին հաղորդում են հավաքական ամփոփիչ արժեք, քանի որ նրանցում պարունակվող, հիմնականում շմանքամասնացրած տվյալները իրականում բյուրեղացումն են այլ ծավալուն վկայագրերի: Այդ վկայություններում քավական հատակ է նշմարգում տեղի ունեցող ողբերգությանը տրվող գնահատականի աստիճանական զարգացումը, որի վերջնական փուլում դրանք միարերան պնդում են՝ դրանք ծրագրվել են քուրքական իշխանությունների կողմից, որոնք կոտորածների և քոնի տեղահանումների միջոցով նպատակ ունեին հայերին ոչնչացնել: Մեկ այլ կարևոր հանգամանքն է այն, որ այս փաստաթղթերը որոշակի պատկերացում են տալիս հետագոտողին Հայոց ցեղասպանության տարիներին այդ հարցի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշման, նրա ձեռնարկած պատասխան քայլերի մասին, թեև պետք է խոստովանել, որ դժվար է այս առումն պարունական պատկերացում կազմել: Եվ, վերջապես, այս նյութերը բավական առատ են Հ. Մորգենթաուի՝ Կ. Պոլսում ամերիկյան դեսպան եղած ժամանակ հայօգուտ գործունեության մասին: Դրանք լի են դիվանագետի ակտիվ ջանքերի մասին վկայություններով, որ նա գործադրել է մի քանի ուղղություններով, դիվանագիտական միջամտություններից սկսած մինչև զուտ մարդասիրականը: Մորգենթաուի կերպարը՝ իրեն մարդասեր և հայասեր մեզ ավելի հստակ է ներկայանում նրա՝ հայերի մազապործ թեկորների փրկությանը ուղղված նախածեռնությունների ուսումնասիրություններից, նախածեռնություններ, որոնք միայն մի մասը, ցավոր, իրականացավ, սակայն իր զգալի դերը ունեցավ արևմտահայության որոշ թեկորների այդ ծանր արհավիրքից փրկելու գործում:

<sup>50</sup> New York Times, 24 September.

<sup>51</sup> New York Times, 9 October.

<sup>52</sup> RG 59, 867.4016/291, բերվող է ըստ Armenian Review, 1984, Spring, Vol.

37, No. 1, p. 54.

<sup>53</sup> RG 59, 867.4016/302, ibid., p. 54.

ԱՄՆ-Ի ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

file no. 867.4016/58a

Պետրարտուղարք Թուրքիայում դեսպանին (Սորգենթառին)

[հեռագիր]

Վաշինգտոն, ապրիլ 27, 1915

626. Ուստաստանի դեսպանը մեր ուշադրությանը ներկայացրեց Հայոց կաթողիկոսի դիմումը, որով խնդրվում էր, որ մեր կառավարությունը միջնորդի բուրքական կառավարության առաջ՝ կանխելու համար Թուրքիայի տարածքում խաղաղ հայերի կոտորածը:

Խնդրում են հարցը ներկայացնել կառավարությանը, պնդելով, որ գործուն միջոցներ ձեռնարկվեն այլակրոնների բռնություններից հայերին պաշտպանելու ուղղությամբ:

Ուստաստանի դեսպանը ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ ոստական տարածքում կան բազմաթիվ մուսուլմաններ և նրանք պաշտպանված են կրոնական հալածանքից:

Բրայեն

Steu' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 980.

file no. 867.4016/58

Թուրքիայում դեսպանը (Սորգենթառ) պետրարտուղարին

[հեռագիր]

Կոստանդնուպոլիս, ապրիլ 27, 1915

[ստացված՝ ապրիլ 28]

608. Ավելի քան 100 ականավոր հայեր են ծերբակալվել հեղափոխական պրոպագանդան կանխելու պատրվակով։ Նրանց մեջ է Լևոն Չիրինգոնը՝ նպատակագրված քաղաքացի Պարսկաստանից, որի ամերիկյան քաղաքացիությունը ճանաչվել է Բ. Դուան կողմից։ Զքաղվում են խնդրով։ Նրանց կյանքը, հավանաբար, վտանգված չէ, քայլ նրանց աքսորում են երկրի խորքը։ Հակահայկական արշավը մասն է կազմում բոլոր ոչ-բուրք և ոչ-իբրիհայրական տարրերի դեմ կազմակերպված շարժման և կան նշաններ, որ դրան կիազդրդեն սիոնիստների դեմ գործողությունները։ Ներքին նահանգներից նույնպես ստացել են հայերի մասին աննպաստ լուրեր։ Գործընկերներս և

ես մեծ ջանքեր ենք գործադրում կանխելու համար խմբությունները և դադարեցնելու համար շարժումը։

Ամերիկյան դեսպան

Steu' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 980.

file no. 867.4016/58

Պետրարտուղարք Թուրքիայում դեսպանին (Սորգենթառին)

[հեռագիր]

Վաշինգտոն, ապրիլ 29, 1915\*

633. Դեպարտամենտի ապրիլի 27-ի և Զեր 608, ապրիլի 27-ի։ Հորդորեք բուրքական կառավարությանը պաշտպանել հայերին և սիոնիստներին։

Բրայեն

Steu' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 980.

file no. 867.4016/58

Նորին գերազանցություն Ուստաստանի դեսպան

գ. Բախմետևին, ապրիլ 28, 1915

Զերդ գերազանցություն

Համաձայն ապրիլի 27-ի Զեր բանավոր դիմումի, որում հայեկեղեցու կաթողիկոսի անունից խնդրվում էր, որ մեր կառավարությունը միջնորդի բուրքական կառավարության առաջ՝ կանխելու համար Թուրքիայի տարածքում խաղաղ հայերի կոտորածը, պետդեպարտամենտը կ. Պոլսի ամերիկյան դեսպանին հրահանգել է՝ հարցը ներկայացնել բուրքական կառավարության ուշադրությանը՝ պնդելով, որպեսզի միջոցներ ձեռք առնվեն՝ հայերին այլ

\* Հայտ Ա. Հայրապետյանի՝ պետք է լինի 26/27 (տես A. Hairapetian, ““Race Problems” and the Armenian Genocide: The State Department File” in *Armenian Review*, 1984, Vol. 37, No 1-1455, p. 62) սակայն այս և հաջորդող հեռագրերը ցույց են տալիս, որ 27/28 է. ամենահավանականը:

կրոնի ներկայացուցիչների բռնությունից պաշտպանելու նպատակով:

Նախքան պետդեպարտամենտի հեռագիրը ստանալը, Կ.Պոլսում ամերիկյան դեսպանը ահազանգել է մեզ, հաղորդելով, որ 100-ից ավելի ականավոր հայեր էին ծերքակալվել՝ հեղափոխական պրոպագանիան կանխելու պատրվակով և որ այդ մարդկանց կյանքը թերևս վտանգված չէ, թեև նրանց աքսորում են երկրի խորքը։ Այս հաղորդագրությունը ստանալուն պես՝ պետդեպարտամենտը հեռագրեց դեսպանին՝ [իրահանգելով] որպեսզի [վերջինս] պնդի, որ թուրքական կառավարությունը պաշտպանի հայերին։

Ընդունեք, Զերդ գերազանցություն, հարգանքներիս հավատիքը։

Հրայեն

Տես՝ Genocide: Crime against Humanity, Special Issue of the «Armenian Review», Spring 1984, Vol. 37, No. 1, pp. 62-63.

file no. 867.4016/59

Թուրքիայում դեսպանը (Սորգենքառ) պետքարտուղարին  
[հեռագիր]  
Կոստանդնուպոլիս, ապրիլի 30, 1915  
[ստացված՝ մայիսի 1]

614. (գաղտնի) Ձեր 626, իմ 608. Անդադար տեղեկություններ են ստացվում կայսրության որոշ շրջաններում հայերի նկատմամբ հետապնդումների, քալանի և կոտորածների մասին։ Խիստ դիմումներ են կատարվել Հայոց պատրիարքի, Խոտիայի դեսպանի, Բուլղարիայի ներկայացուցչի և իմ կողմից։ Ռազմական նախարարը՝ հայերի դեմ շարժումը արդարացնելու նպատակով, ինձ հավաստիցեց, թե ոռուահայերն էին պատասխանատու Վանում պետական և փոստի շենքերի՝ ոռումբերով ավերման համար, քաղաք, որը նրանք տնօրինում էին 12 օրվա ընթացքում։ Նա հայտարարեց, որ իշխանությունները գգուշանում են դաշնակների կողմից համատեղ ծրագրված նման հարձակումներից և այդ պատճառով այդ քաղաքի որոշ հայ բնակիչներ տարագրվել են։ Լուրեր են պտտվում, որ այն ժամանակ, երբ հայերը տիրում էին Վանին, [տեղի] թուրք գեներալնահանգապետը, ռազմական նախարարի փեսան, հարձակման էր ներքարկվել, վիրավորվել և ապա՝ մահացել վերքերից։ Քանի որ

արևելյան նահանգներում ամեն կարգի երթևեկությունը կանգ է առել և թորակցությունը ենթարկվում է խիստ գրաբննության, անհնար է որոշել այդ լորերի ու հայտարարությունների հավաստիության աստիճանը։ Այսօր Հայեալի հյուպատոսից ստացված գեկուցագրից պարզվում է, որ թուրքական իշխանությունները Զեյքունի և Մարաշի հայ բնակչության նկատմամբ վարկում են անհավատայի դաժանությամբ և պատճառաբանելով մի քանի հայ դասախրների գործողությունները, տարագրում և ցիրուցան են անում բազմաքանակ անմեղ բնակչությանը։ Զեզ կուղարկեն գեկուցագրի պատճենը։

Ինչպես երևում է, այդ միջոցառումները մասն են կազմում ոչ-բուրք և ոչ-իբրիհաղական տարրերի և կազմակերպությունների դեմ ուղղված բռնաճնշումների։ Մինչդեռ հեռավոր շրջանների պաշտոնատարները, հնարավոր է, այդ արշավը վարեն ավելի մեծ խստությամբ, քան դա կցնականար կարինետը։ Մեծ վեգիրը, ռազմական և ներքին գործերի նախարարները խոստացել են, որ զանգվածային կոտրածներ կամ ապօրինություններ տեղի չեն ունենա և որ հայերի մի հատված, որոնք դաշնակներ չեն և սիսալմամբ են ծերքակալվել, ազատ կարձակվեն։ Այսօր առավոտ ես խոսել եմ Խոտայիայի դեսպանի հետ և պայմանավորվել, որ նա այցելի Մեծ Վեգիրին և հանդես գա էլ ավելի խիստ դիմումներով՝ հայերի և այլ ոչ-մուսուլմանների պաշտպանության նպատակով։

Ամերիկյան դեսպան

Տես՝ Genocide: Crime against Humanity, Special Issue of the «Armenian Review», Spring 1984, Vol. 37, No. 1, pp. 63-64.

file no. 867.4016/60

Թուրքիայում դեսպանը (Սորգենքառ) պետքարտուղարին  
[հեռագիր]  
Կոստանդնուպոլիս, մայիսի 2, 1915  
[ստացված՝ մայիսի 3]

624. Ձեր 633, իմ 614. Խոտայական դեսպանը, որ ստացել էր իմ ստացած հրահանգներին համանան իրահանգներ, երեկ միացավ ինձ Բ. Դառն խիստ դիմումներ կատարելով, համաձայն Ձեր 626-ի։ Ներքին գործերի նախարարը հավաստիացրեց, որ Բ. Դուռը տեղական իշխանություններին կարգադրություններ է ուղարկել այն մասին, որ ճնշումներից պաշտպանեն անմեղ մարդկանց և որ յուրա-

քանչյուր պաշտոնյա, ով չենթարկվի այդ հրահանգներին, պատժվի: Հուսարի տեղեկատվություն կարելի է հայրայթել միայն կոնկրետ վայրերում հետաքրնության արդյունքում, ինչը օսմանյան կառավարությունը չի բոլորապես այժմ: Եվ Ավստրիայի և Գերմանիայի դեսպանները տատանվում են միջամտելու իրենց դաշնակցի ներքին գործերին, քայլ արդեն համոզել են ավստրիական դեսպանին, որ ոչ-մուսուլմանների կոտորածները լրջորեն վնասում են ինչպես իրենց, այնպես էլ բոլորական կառավարությանը, և ավստրիական դեսպանը դա փոխանցել է իր կառավարությանը:

Մեզ հաջողվել է կասեցնել սիոնիստների դեմ շարժումը և նրանց ներկայացուցիչ Յակոբոսնի համար ծեռք բերել բույսություն, որով նա քողնի թուրքիան, վտարվելու փոխարեն:

### *Ամերիկյան դեսպան*

*She's Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 981.*

*file no. 867.4016/71*

*Թուրքիայում դեսպանը (Սորգենթաում) պետքարտուղարին  
[հեռագիր]*

*Կոստանդնուպոլիս, Մայիսի 25, 1915  
[ստացված՝ մայիսի 1]*

310. (Խիստ գաղտնի). Պատիվ ունեմ Ձեզ տեղյակ պահելու ներկա կառավարության կողմից՝ հայ համայնքի նկատմամբ որդեգրած քաղաքականության որոշ ասպեկտների մասին: Հայերի նկատմամբ՝ վայրիվերությունը լի վերաբերումնքը այժմ ստացել է որոշակիորեն բացասական ընթացք՝ ի հետևանք ներկա պատերազմի: Բանն այն է, որ ներկա օսմանյան կառավարությունը հայերին այլև չի համարում հավատարիմ հպատակներ: Վերջին տարիներին հայերի կրած նեղություններն ու բռնաճնշումները, ի հակառություն Ռուսաստանում նրանց համեմատարար բարվոր վիճակին, բնականարար ստիպում են նրանց համեմատելու իրենց վիճակը կրոնակիցների վիճակի հետ այնտեղ: Սահմանադրական ժամանակաշրջանի սկզբնական խանդակառությունն այստեղ շուտով նարեց, մինչեւ 1909թ. Աղանայի կոտորածների հուշը դեռ բարձ է նրանց հիշողությունը: Ուստի կարելի է ենթադրել, որ հայերի ճնշող մեծամասնությունը՝ բոլոր ոչ-մուսուլման համայնքների և շատ բոլոր հետ

համատեղ, շատ կցանկանային իշխանավորություն: Մինչդեռ այդ ծգտման և իրականության միջև մեծ անդունդ կա: Բացի Արևելյան Հայաստանի [իմա՝ Արևմտյան Հայաստանի արևելյան շրջանների] և Ալեքսանդրեանից հյուսիս գտնվող Կիլիկիայի, հայերը՝ ոչ ավել, քան այլ դժգոհ համայնքները, չունեն ոչ միջոցներ և ոչ էլ վճռականություն իրենց իդեալ իրականացնելու համար: Չեյքունի շրջանում, որ նրանցից [իմա՝ հայերից] ոմանք փորձել են խոսափել գինվորական ծառայությունից, Վերջերս խստագույն բռնաճնշումների մի այլք է տարածվել: Այդ գործողությունների մանրամասները հիմնականում անհայտ են այդտեղ, սակայն բավականաշափ փաստերի ենք տիրապետում (տեսեք հյուպատոս Ջերսոնի ապրիլի 21-ի գեկուցագիրը), համոզվելու համար, որ ամբողջական գյուղեր են ավերվել սպանությունների, բռնաբարությունների և բալանի շարանի ուղեկցությամբ: Ինչպես երևում է, վարդում է ավելի հետևողական քաղաքականությունը, որում բնակչության զանգվածային տեղահանումների տեսքով: Վերջերս ինձ տեղեկացրին (տեսեք կից ներկայացվող դր. Դոդի նամակը), որ այդ շրջանից Կոնյա են ժամանել 4000 անտուն տեղահանյաներ՝ ամենամնիսիքար վիճակում: Մեր Կարմիր խաչի առաջարկած ծառայությունները մերժվել են բուրքական իշխանությունների կողմից, որոնք հայտարել են, որ տեղահանյալներին տեղաբաշխելու են հարևան երկրամասում: Այս խնդրում վարդու քաղաքականությունը նպատակ ունի, ինչպես երևում է, տրոհել հոծ բնակչող հայ համայնքը, որին մինչ այժմ լեռնային ամրություններում հաջողվել էր պահպանել որոշակի ազատություն, և զանգվածային տեղահանման միջոցով, որը նրանց կզրկի բնականոն կենսամիջոցներից, տեղափորել նրանց գուտ քուրքաբնակ գյուղերում, ուր, նրանք, ովքեր դիմանան այդ ծանր պայմաններին, անվտանգ կլինեն կառավարության համար:

Կայսրության արևելյան շրջաններում, թեև լուրերը ծայր աստիճանի աղքատիկ են և քիչ արժանահավատ, ինչպես երևում է, Վանում հայերը ապստամբություն են բարձրագրել՝ ուստաներին օգնելու նպատակով: Այսպես, այստեղի մի նախկին պատգամավոր, մի ուն Փաստերմաջան, որը մեզ մի քանի տարի առաջ օժանդակել էր երկարության կոնցեսիաներ ծեռք բերելու հարցում, ըստ լուրերի, կովում է բուրքերի դեմ՝ հայ կամավորների մի գումարտակի գլուխ անցած: Ասում են, թե այդ ապստամբները տիրացել են Վանի մի մասին և պարտիզանական կոիվներ են մղում այնպիսի տեղանքում, ուր կանոնավոր ռազմական գործողությունները ծայրահեղ բարդ են:

Թե ինչ աստիճանի են նրանք կազմակերպված և ինչ հաջողությունների են նրանք հասել ինձ դժվար է ասել. նրանց թվի մասին տարբեր զնահատականներ կան, սակայն ոչ ոք նրանց թիվը 10000-ից պակաս չի համարում. 25000-ը թերևս լինի ծշմարտությանը առավել մոտ: Այդ իրադարձությունները, գործողությունները բնականաբար, կասկածանք են առաջացրել այլ վայրերում և մասնավորապես՝ մայրաքաղաքում ապրող հայ խաղաղ բնակչության նկատմամբ: Մասսամբ այն պատճառով, որ նրանց կասկածում են ապատամբերի հետ համագործակցելու մեջ, մասսամբ էլ այլախոհ այլ կազմակերպությունները ոչնչացնելուն միտքած քաղաքականության պատճառով, կառավարությունը ձեռնամուխ է եղել, ինչպես Ձեզ վերջերս տեղեկացրեցի, Կ. Պոլսում հարյուրավոր հայերի ձերքակալմանն ու աքսորին: Նույն կարգի ճնշամիջոցներ են ձեռնարկվել ներքին շրջանների քաղաքներում, մինչդեռ գյուղերում բիրտ ստորադաս պաշտոնյանների կողմից ձեռնարկված համանման միջոցները, պետք է որ ծայրահեռությունների առիթ տված լինեն: Ես չեմ կարծում, որ մինչ օրս զանգվածային կոտորածներ տեղի ունեցած լինեն, բայց ճնշման ու հարկադրամքի միջոցներն անշուշտ մարդկային գոհերի պատճառ են դարձել: Գործի դրված բռնությունը բավարար եղավ ոտքի հանելու համար անհանգիստ և դյուրագրգիռ բնակչությանը, որն ի լրում՝ հակված է հավատ ընծայելու սենսացիոն լուրերին: Այսպիսի հանգամանքների բերումով, որոնք դեպարտամենտը կիասկանա, շատ դժվար է իրական կամ ենթադրական կոտորածների մասին անդադար մեզ հասնող շշուկների իսկությունը հավաստել: Երկրի ներքին շրջանների հետ նամակագրությունը փաստորեն դադարել է կամ այսես է գրվում, որ գրաքննիչը շարգելի դրանց ուղարկումը: Շանապարհորդությունները բույլատրվում են միայն իբրև բացառություն և տեղի են ունենում մեծ դժվարությամբ: Հայերդ, բոլոր իշխող կուսակցությանը շհամակրողների նման, վախենում են այդ մասին հայտնելուց: Եթե անզամ նրանք դա անել համարձակվեին, միևնույն է, նրանք չունեն միջոցներ իրենց դժգոհությունը լսելի դարձնելու համար: Կառավարությունը անփոփոխ կերպով հերքում է փաստերը կամ էլ ամբողջովին աղավաղում դրանք: Ժամանակ առ ժամանակ ներքին շրջաններում գտնվող մեր միսիոններից լուրեր են հասնում, բայց բղբակցության դժվարություններն ու վտանգներն այնքան մեծ են, որ այդ լուրերը լինում են միայն հատվածական և դիպվածային:

Իրավիճակն այնպիսին է, որ երկու կողմերն էլ միմյանցից վախենում են: Վախ՝ հայերի կողմից, որոնք իշխում են անցյալ կոտորածները և վախ՝ կառավարության կողմից՝ ենթադրական կամ ծրագրվող դավադրություններից: Բոլոր ոչ-մուտքանաների նկատմամար կառավարության կամկածամտությունը՝ ավելի արտաքին, քան իրական, որի նպատակն է բնակչության մեջ առաջացնել գտնություն. տարբեր ծևերով դրսերպեց վերջերս: Բանակում հայերի մեծ մասը, հույս գինուրների պես, գինարափելի են և օգտագործվում են ֆիզիկական աշխատանքներում: Այստեղ, ինչպես ես եմ հասկանում, մի խստագույն կանոնակարգ է գործի դրվել, համաձայն որի՝ մահապատճի սպառնալիքով, բոլոր բնակիչները պարտավոր են հանձնելու իրենց գեներերն իշխանություններին. սակայն այս կանոնակարգը այլ կերպ է կիրառվել մուսուլմանների նկատմամբ, որոնց բույլատրվել է պահել գենքը: Վերջերս տեղի ունեցած Բոսֆորի ոչ-մուտքանան բնակչության տարահանումը ծանր տառապանքներ է պատճենել այդ վերին աստիճանի խաղաղատեր համայնքին: Օր չի անցնում, որ մենք չլսենք նոր ճնշամիջոցների մասին: Ներկա ժամանակաշրջանը խստագույն բռնածնչումներով է նշանափորված, սակայն իրական սպանություններ, ինչպես երևում է, սահմանափակ դեպքերում են տեղի ունեցել: Սիություն և առաջադիմություն կոմիտեին շհամակրողները ժամանակաշրջանը բնութագրում են իբրև ահիքագործություն: Սա մի իրադրություն է, որն այսպիսի պահի, եթե կասեցնող տարբեր սակավաթիվ են, կարող է բերել ամենալուրջ և տխուր հետևանքների:

### *Մորգենքառ*

Stu` Genocide: Crime against Humanity, Special Issue of the «Armenian Review», Spring 1984, Vol. 37, No. 1, pp. 66-68.

file no. 867.4016/67

Ֆրանսիայում դնապանը (Շարժիք) պետքարտուղարին  
[ինքազիք]

Փարիզ, մայիսի 28, 1915  
[սուացված՝ 28 մայիսի]

796. Արտաքին գործերի նախարարությունից հենց նոր ստացված նոտայում խնդրվում է, որ օսմանյան կառավարությանը անհապաղ կերպով տեղեկացվի հետևյալը.

Մայիսի 24. Մոտ մեկ ամիս է, ինչ Հայաստանի քուրդ և քուրք բնակչությունը, օսմանյան իշխանությունների քողովությամբ ու օժանդակությամբ կոտորում է հայերին: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել ապրիլի կեսերին (նոր տոմարով) Լըզրումում, Դերջանում, Էգինում (Ակնում), Վանում, Բիրլիսում, Մուշում, Սասունում, Չեյրունում և ողջ Կիլիկիայում: Վանի շրջակա մոտ 100 գյուղերի բոլոր բնակչիները սպանվել են: Այդ քաղաքում հայկական քաղաքաբար պաշարված է քրդերի կողմից: Միաժամանակ Կոստանդնուպոլսում օսմանյան կառավարությունը բռնությունների է ենթարկում անմեղ հայ բնակչությանը: Նկատի ունենալով մարդկության և քաղաքակրթության դեմք մերժական այս նոր հանցագործությունները, դաշնակից կառավարությունները իրապարակայնորեն հայտնում են Բ. Դանը, որ նրանք այս հանցագործությունների [համար] անձնապես պատասխանատու կմկատեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին և նրանց այն ստորագրյալներին, ովքեր ներգրավված կլինեն այդ կոտորածներում:

### Ծարփ

(Վերաշարադրված է Խորքիայում ամերիկյան դեսպանին հաղորդման համար, Մայիսի 29, No 713.)

*Steu' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 981.*

Հ. Սորգենթաուի գեկուցագիրը, բերված լուս Բրայս/Շոյմարի «Կապույտ գրքի», թվագրված 11-ը հունիսի, 1915

Քայլութիւն իրադարձությունների սկսելուց մեկ շաբաթ առաջ, շրջակա գյուղերը դատարկեցին իրենց հայ բնակչիներից: Քայլութիւնը բռնի տեղահանումը սկսվեց հունիսի 1-ին: Բոլոր գյուղերը, ինչպես նաև քաղաքի 3/4-ը արդեն դատարկվել են: Յ-րդ քարավանը ընդգրկում էր 4-5000 մարդ: Տարագրության սկսվելուց ի վեր յոր օրվա ընթացքում 15 տարեկանից բարձր բոլոր տղամարդիկ սպանվել են:

Սհավոր կտտանքներով ուղեկցվող բռնություններ տեղի են ունեցել Բաղեցիկ կամ Պարտիզակ (2000 ընտանիք) հայկական գյուղում, Օվաջիկում (600 ընտանիք), Արվանքեզում (600 ընտանիք), Դոնջոլում (65 ընտանիք), Սարանջայում (1000 ընտանիք). Իսմիրում և այլուր: Քուրթ-Բելենի բնակչիները (6000-7000 ընտանիք) տարագրվել են:

Արարկիրում հայ բնակչությունն ընդունել է իսլամ, այն բանից հետո, եթե 2000 տղամարդիկ սպանվել են:

### Սորգենթաու

(Steu' James Bryce, Arnold Toynbee, The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916: Documents Presented to Viscount Grey of Fallodon, by Viscount Bryce (Uncensored Edition), Reading, UK: Taderon Press, 2000, p. 44. Doc. 2. "Dispatch dated 11<sup>th</sup> June, 1915, from an especially well informed neutral source at Constantinople, communicated by the American Committee for Armenian and Syrian Relief")

file no. 867.4016/70

Խորքիայում դեսպանը (Սորգենթաու) պետքարտուղարին  
[իեռազիր]

Կոստանդնուպոլիս, հունիսի 18, 1915

[ստացված՝ հունիսի 21]

778. Զեր 715-ը հունիսի 3-ին փոխանցվեց Մեծ Վեզիրին, որը ավտոսանը հայտնեց անձնապես պատասխանատու նկատվելու համար և վրդովմունք՝ օտար կառավարությունների կողմից՝ օսմանյան կառավարության հայ հպատակների նկատմամբ իր վեհապետական իրավունքներին միջամտելու վործ անելու առքիվ: Միաժամանակ հայերի դեմ հալածանքները խստանում են: Երեք աշքի ընկնող պատգամավորներ՝ Zjrabvart, Brandie, Cherajian ծերբակալվել են և 20 հայեր կախաղան են հանվել՝ անջատողական դավադրության շինծու մեղադրանքով: Լուրեր են պտտվում, որ պատրաստվում են իրազործվել նոր մահապատճեներ: Իմ հաճախակի ու համառ ոչպաշտոնական դիմումները միայն որոշ դեպքերում են բերում բռնանշությունների մեղմացմանը, սակայն դրանք ի զրու չեղան նրանց հետ պահելու իրենց [բռնած] ուղղությունը, որը նրանք փորձում են արդարացնել ուղմական անհրաժեշտության պատճառաբանությամբ:

### Ամերիկյան դեսպան

*Steu' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 982.*

\* Արանք Զոհրապ, Բրենդի (Համբարձում Բոյաջյան), Զրաջյան անուններն են, որոնք դիմումամբ կամ անգիտության պատճառով եղած են:

Խորհրդայում դեսպանը (Սորգենթառում) պետքարտուղարիմ

[ինքազիր]

Կոստանդնուպոլիս, հունիսի 10, 1915

[Խոտացված հունիսի 14]

841. Իմ 778 հունիսի 18. Հայերի կոտորածներն ընդունում են աննախաղեա չափեր: Ամենատարբեր շրջաններից զեկուցագրերը վկայում են, որ փորձ է արվում արմատախիլ անել խաղաղ հայ քնակշուրյան և նրանց ավերածության ու չքափորության մատնել կամայական ծերբակալությունների, սարսափելի տաճամիջոցների, զանգվածային բռնազարդերի և կայսրության մի ծայրից մյուսը տեղահանումների միջոցով, որոնք ուղեկցվում են բռնաբարությունների, կողոպուտի և կոտորածի վերածվող սպանությունների հաճախակի դեպքերով: Այդ միջոցառումները ոչ բե պատասխանն են ժողովրդի կամ ֆանատիկումների պահանջների, այլ լրիվ կամայական են և ուղղորդվում են Կ. Պոլսից՝ ուազմական անհրաժեշտության անվան տակ, հաճախ այն շրջաններում, որ անհավանական է, որ ուազմական գործողություններ տեղի ունենան: Մուսուլման և հայ քնակշուրյուններն ապրել են համերաշխ, բայց քանի որ որոշ հայեր, որոնցից շատերը ուսահապատակ են, որպես կամավոր Կովկասում միացել են ուսական բանակին, և քանի որ ոմանք ներգրավվել են զինված հեղափոխական շարժումներում, իսկ ուրիշները օգնել են ուսաներին գրավելու Վանի շրջանը, սարսափելի վրեժ է լուծվում [դրա համար]: Տուժողների մեծ մասը անմեղ են և հավատարիմ են եղել օսմանյան կառավարությանը: Համարյա բոլորը ծերեր են և կանայք: 20-45 տարեկան բոլոր տղամարդիկ բուրքական բանակում են: Զոհերին տներից դուրս են հանում և ոտքով ուղարկում այնպիսի շրջաններ, որ նրանք օտար են և ոչ մի պատրաստություն չի տեսնաված նրանց տեղափորելու և կերակրելու համար: Որոշ վայրերում մեզ չի բույլատրվել մեղմել նրանց զրկանքները կամ շփվել նրանց հետ: Սի քանի սակավարիկ դեպքերում նրանք ընդդիմացել են այդ կոտորածներին և ապաստան են գտել լեռներում: Որոշ զենքեր կամ ոռմբեր են հայտնաբերվել, ինչը դրդել է բուրքական իշխանություններին կատարելու նոր դաժանություններ, ինչը նրանք փորձում են արդարացնել [հայերի կողմից ցույց տրվող] դիմադրությամբ: Անասելի թշվառությունը, հիվանդությունները, սովը և զոհերը անարգել կշարունակվեն: Հյուպատոս Դիխոր Խարպուտից հաղորդում է:

«Ամերիկյան քոլեջի պրոֆեսորներին տաճանքի են ենթարկել: Ուրիշները տաճանքներից մահացել են կամ կորցրել բանականությունը: Բանակ զորակոչված հարյուրավոր երտասարդ հայ տղամարդիկ, որոնցից ոմանք ամերիկյան քոլեջի ուսանողներ են, աքսորվել են առանց սննդի, հագուստի կամ դրամի: Հունիսի 23-ի գիշերը մի քանի հարյուր այլ հայեր, որոնք վերջերս են ծերբակալվել (այդ բվում ամերիկյան քոլեջի դասատուներ) գիշերվա կեսին աքսորվել են առանց սննդի, հագուստի կամ դրամի: Ծերբակալվածների երկու խմբերում էլ ճանապարհին շատ մահեր են արձանագրվում: Ինչպես երևում է, պատրաստություններ են տեսնվում ավելի մեծ խմբի աքսորվելու համար: Ինձ այսօր գաղտնաբար տեղեկացրին, որ այժմ հայերից մի հսկա գումար են պահանջում: Թվում է, թե գոյություն ունի հայ ազգը խորտակելու համակարգված ծրագիր: Ամեն ինչ ինձ ստիպում է կանխազգալ ամերիկյան դպրոցների մշտական փակումը»:

Դա վերաբերում է միայն մի վայրի: Շատ հայեր դարձել են մուսուլման՝ խոսափելու համար հալածանքից: Բացի մարդասիրական նկատառումներից, մենք ունենք իրական շահ այն բանում, որ բռնի սեփականագրկման ու տեղահանումների ենթարկված որոշ հայեր ԱՍՆ-ի հպատակագրված քաղաքացիներ են, և որ Ամերիկյան խորհրդի բարեգործությունն ու կրթական գործունեությունը զգայի չափով կտուժեն, իսկ շատ վայրերում խսպառ կդադարեն:

Միակ դեսպանությունը, որն ի վիճակի է նապատելու այս վայրագությունների մեղմացմանը, Գերմանիային է, բայց ես կարծում եմ, այն պարզապես կրավարարվի խորհուրդ տալով և ծևական բողոքով, որ հավանաբար նախատեսված է [սոսկ] արձանագրելու և հետագայում պատրասխանատվությունից խոսափելու համար: Գերմանիայի դեսպանը պատրաստվում է մեկնել վեց շաբաթյա արձակուրդի: Ես նրան հասկացրել եմ, որ նա և իր կառավարությունը այդ ոճուում իրենց զգայի բաժինը կունենան: Հենց որ նրա պաշտոնակատարը ժամանի, ես հերկուելու շանքեր կգործադրեմ նրա աջակցությունը շահելու համար: Ավատրիայի դեսպանը ինձ խոստացվ փորձել ազդել ներքին գործերի նախարարի վրա:

Ես բազմից խոսել եմ Սեծ վեգիրի հետ, խստորեն խնդրել ներքին գործերի և ուազմական նախարարներին դադարեցնել այս հալածանքը: Իմ փաստարկները, բացի Կ. Պոլսին վերաբերողներից, անօգուտ էին: Իշխանավորներ հեղափոխականներ են և տապալել են համիլյան կառավարությունը որոշ հայ հեղափոխականների հետ

համագործակցելով, որոնք զիտեն իրենց մերոդը և վախսնում են նրանցից՝ իբրև ներկա իշխանությունների դեմ [հակահեղափոխության?]: Ինարավոր կորիգ: Նրանք խոստովանում են, որ կդիմեն ամեն միջոցի՝ պահպանելու համար կառավարության նկատմամբ վերահսկողությունը: Նրանք պնդում են, որ Միություն և Առաջադիմություն կոմիտեի ազգայնական քաղաքականությունն է, որ իրենք հրաժարվում են վերափոխել, անզամ երբ Ռուսաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան սպառնացին օսմանյան կարինետի մինչաւրություններին անձնական պատասխանատվությամբ: Խորքական իշխանությունները ցանկանում են օգուտ քաղել ներկա իրադրությունից, երբ մեծ տերություններից երեքը նրանց դեմ պատերազմում են, իտալիան՝ լարված հարաբերություններում, իսկ մնացած երկուսը իրենց դաշնակցներն են և հետևաբար՝ չեն միջամտի, մինչ իրենք հետ են մղում Դարդանելի վրա հովվու գրոհը:

Ես խորհրդակցել եմ ամերիկան տարբեր միսիոներների հետ, որ իմա այստեղ են [Եկել] Թաջմարտվանից (Սարգվան?), Բեյրութից, Պարտիզակից և Կ.Պոլսից, և բոլորն էլ համամիտ են, որ ներկա ճգնաժամը ավելի ծանր է քան 1895-ի և 1896-ի կոտորածների ժամանակ, բայց նրանցից ոչ ոք չկարողացավ իմ արդեն կատարած քայլերին հաջորդող գործողություններ առաջարկել: Նրանք վախենում են, որ իրերի այդ ընթացքը չի փոխվի: Խորքական իշխանությունները ինձ հստակորեն տեղեկացրին, որ ես որևէ իրավունք չունեմ խառնվելու իրենց ներքին գործերին: Այնուամենայնիվ, ես ցանկանում եմ հարցնել՝ արյո՞ք Դուք ունեք որևէ առաջարկ:

#### Ամերիկան դեսպան

State Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 982-984.

file no. 867.116/341

Օտարերկրյա միսիաների լիազորմերի ամերիկյան խորհրդի քարտուղարը (պատվ. Զեյմս Բարտոնը) պետքարտուղարին  
[հեռագիր]

Քյիֆրոն Սփիրինզու, Նյու Յորք, անբվակիր  
[ստացված հուլիսի 14, 1915]

Խորքիայի տարբեր մասերից [ստացված] հաղորդագրությունները վկայում են բոլորերի կողմից ամերիկացիների՝ նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մասին: Հնարավոր չէ որևէ բան անել՝ զսպելու համար այդ դաժանությունները:

Զեյմս L. Բարտոն

State Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 984.

file no. 867.116/341

Պետքարտուղարը Օտարերկրյա միսիաների լիազորմերի ամերիկյան խորհրդի քարտուղարին (պատվ. Զեյմս Բարտոն)  
Վաշինգտոն, հուլիսի 19, 1915

Պետդեպարտամենտը հաստատում է հուլիսի 14-ին բվագրված Զեր հեռագրի ստացումը, որ նշվում է, որ Խորքիայի տարբեր մասերից տեղեկություններ են հաղորդվում բոլորերի կողմից ամերիկացիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մասին և հարցում է արքում, թե արդյոք որևէ բան հնարավոր չէ անել՝ զսպելու համար այդ դաժանությունները:

Դեպարտամենտը բոլորերի կողմից ամերիկացիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մասին որևէ գեկուցագիր չի ստացել և ուրախ կլիներ Զեզանից ստանալ մանրամասներ, եթե Դուք ստացել եք որևէ տեղեկություն այս խնդիրի վերաբերյալ:

Դեպարտամենտը, այնուամենայնիվ, կարծում է, որ Զեր հեռագրում «ամերիկացիներ» բառը պետք է ընթերցվի իբրև «հայեր»: Դեպարտամենտը պատիվ ունի հայտարարելու, որ այն արել է և շարունակելու է անել այն ամենը, ինչ այն կարող է հետևողականո-

\* Համաձայն հուլիսի 2-ի բվագրված նամակի, պետք է կարդացվի «հայեր» (file no. 867.116/345) Ծան բնագր.

թեն անել՝ համոզելու համար բուրքական կառավարությանը, թե-թևացնելու այդ ազգի [ծանր] վիճակը: Այսուամենայնիվ, անհրա-ժեշտ է ավելացնել, որ հայերին օգնելու ջանքերը ավելի են դժվարա-նում, ելնելով այն փաստից, որ հայերի հոծ զանգվածներ բուրքական կառավարության դեմ զինված ապստամբության մեջ են և բուրքա-կան կառավարությունը հայտարարում է, որ իր կողմից ձեռք առնված միջոցները այնպիսին են, ինչպիսիք անհրաժեշտ են այդ ազգից իր պաշտպանության համար:

#### Առեւտ Լանսինգ

Stu` Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 984-985.

file no. 867.4016/79

Խորքիայում դեսպանը (Մորգենթաուն) պետքարտուղարին  
[հեռագիր]  
Կոստանդնուպոլիս, հուլիսի 20, 1915  
[ստացված՝ հուլիսի 23]

866. Ձեր 865. 'Նեսպանությունը չի ստացել ԱՄՆ-ում ծնված կամ հպատակագրված ԱՄՆ-ի քաղաքացիներին հասցված վնասների մասին տեղեկություններ:

#### Ամերիկյան դեսպան

Stu` Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 985.

file no. 867.4016/74

Պետքարտուղարը Խորքիայում դեսպանին (Մորգենթաուն)  
[հեռագիր]  
Վաշինգտոն, հուլիսի 29, 1915

865. Ձեր 841 հուլիսի 10. 'Նեպարտամենտը հավանություն է տալիս Ձեր գործելակերպին ուղղված ներքին գործերի և ռազմական նախարարներից՝ հայերի հալածանքների դադարեցումը հայելուն և այս հարցում Գերմանիայի և Ավստրիայի դեսպանների աջակցությունը շահելուն: 'Գեպարտամենտը չունի լրացուցիչ առաջարկու-

թյուններ՝ այս դժվարագույն իրադրության վերաբերյալ, բացի այն, որ Դուք շարունակեք գործել, ինչպես անցյալում: Արդյո՞ք ԱՄՆ-ում ծնված կամ հպատակագրված որևէ ամերիկյան քաղաքացի, որևէ ունի ԱՄՆ-ի օրենքի պաշտպանության իրավունք, վնասվել է այս խառնակության ընթացքում:

#### Լանսինգ

Stu` Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 984.

RG 59, 4016/83

Խորքիայում դեսպանը (Մորգենթաուն) պետքարտուղարին  
[հեռագիր]

Կոստանդնուպոլիս, 31 հուլիսի, 1915

[ստացված՝ 3 օգոստոսի]

893. Իմ 841 (867.4016/74) և 858 (867.4016/76): Գերմանական Orient Mission-ի նախազան դոկտոր Լեփսիուսը, որը վեց հայկական որբանոց ունի Խորքիայում, հուսալի աղբյուրից տեղեկություն ունի, որ Երգրումի շրջանից տեղահանված հայերը՝ մեծ մասամբ կանայք ու երեխաներ, կոտորածի են ենթարկվել Թեմախի մոտ՝ Երգինջանի և Խարառութի միջև: Նման տեղեկություններ գալիս են նաև այլ աղբյուրներից, գույց տալով, որ այդ դժբախտ մարդկանցից քերը երբեւ կհասնեն իրենց նպատակակետին: Նրանց վիճակը որպայի է: 'Նոկտորը առաջարկում է հարցը ներկայացնել միջազգային կարմիր խաչին՝ համատեղ ջանքերով համոզելու համար Գերմանիային, որպեսզի վերջին պահանջի դադրեցնել այդ սարսափները: Նա շատ է խնդրում, որ իրեն բույյատվի ծանոքանալ դեսպանատանը պահիվող [խնդրին առնչվող] փաստաթղթերին: Ես կրույլատրեմ, եթե պատղեպարտամենտը չի առարկում:

#### Մորգենթաուն, ԱՄՆ դեսպան

Stu` Documents: The State Department File, in *Armenian Review*, Spring 1984, Vol. 37, No 1-145, p. 85.

Թուրքիայում դեսպանը (Մորգենքառ) պետքարտուղարին

[հեռագիր]

Կոստանդնուպոլիս, օգոստոսի 4, 1915

Զեր 893. հուլիսի 31. Զեզ տրվում է իրավունք Լեփսիուսի փաստարդերին ծանոթանալու հարցում վարչել Զեր հայեցողությամբ:

Հանսինգ

Տես՝ Documents: The State Department File, in *Armenian Review*, Spring 1984, Vol. 37, No 1-145, p. 85.

file no. 867.4016/90

Թուրքիայում դեսպանը (Մորգենքառ) պետքարտուղարին

[հեռագիր]

Կոստանդնուպոլիս, օգոստոսի 11, 1915

[ստացված՝ օգոստոսի 16]

924. Իմ թիվ 841 և 858 հեռագրերը. Թուրքերի հակահայկան գործունեությունը անշեղորեն շարունակվում է: Մեր հյուպատուսներից և այլ անձանցից մշտապես ստացվում են զեկուցագրեր, որոնց պատճենները կստանանք, այն սարսափների մասին, որոնց ենթարկվում են այդ ազգին պատկանող բազմաթիվ անպաշտպան մարդիկ: Հայ ազգաբնակչությունը արագորեն դրւու է քշվում Աղա Բազարից և Խզմիլից: Կ. Պոլսից 50 կիլոմետր հեռու գտնվող Պարտիզակին նոյնն է սպառնում, սակայն պետական նախարարը շնորհել է երկու շարաթվա տարկետում, և եթե ոչինչ հնարավոր չինի անել դադարեցնելու համար այս դաժան բռնաշրջավը, այդ մարդիկ ևս դրւու կրցվեն իրենց տներից և կժողովվեն ներքին շրջանների շորային ու անհյուրընկալ անապատներում, որ նրանց մեծագույն մասը՝ բացառությամբ նրանց, ովքեր ճարահատյալ կընդունեն մահմեղականություն, անկասկած զոհ կզնան կոտորածներին կամ դանդաղ սովամահությանը: Արհեստի և առևտի և ներքին գործերի նախարարները ինձ խոստացել են Կ. Պոլսի հայերին բույլատրել հեռանալ երկրից երբեք չվերադառնալու պայմանով: Ներքին գործերի նախարարն ասում է, որ ինքը հասկանում է, որ ներկա վերաբերունքից հետո ոչ մի հայ չի կարող բարեկամական մնալ բուրքական

կառավարության նկատմամբ, և ակնարկում է, որ կտրուկ միջոցներ ծեռք կառնեն բոլորի դեմ Կ. Պոլսում, եթե որևէ ունացություն արվի կառավարության դեմ: Նկատի ունենալով այն թերևությունը, որով այս երկրում ստեղծվում են պատրվակները, այս հայտարարություններն ինձ անհանգստություն են պատճառում: Դերմանական և ավտրիական դեսպաններն ինձ խոստացել են գործի դնենց ազդեցությունը, բայց ես կասկածում եմ նրանց դիմումների արդյունավետության վրա, քանի դեռ նրանց կառավարությունները հատուկ հրահանգ չեն տվել՝ պնդել այժմ կատարվող գործողությունների դադարեցման և իրենց մահվան ճանապարհին արդեն գտնվող հազարավոր մարդկանց օգտին գործուն պաշտպանության միջոցներ ծեռք առնելու վրա:

Ներքին նահանգների որոշակի վայրերում մնում են զօալի թվով ամերիկյան միսիոներներ և շնայած այդ մարդկանց արգելվում է որևէ համարժեք օգնություն ցույց տալ Յակուտսկի (?) գոհերին, և նրանց վերաբերում են որոշակի կասկածամությամբ, այնուամենայնիվ, ես չեմ կարծում, որ նրանց այժմ անձնապես որևէ վտանգ է սպառնում: Ես մշտապես ուշադրությամբ հետևում եմ խոռոչությունների ներկա փուլին, և կծեռնարկեն ամեն հնարավոր նրանց պաշտպանության և մեկնման համար, եթե իրավիճակը պահանջի: Ներկայումս ես, Փիքը և ուրիշներ հակված ենք մտածելու, որ նրանց համար ավելի լավ է մնալ այնտեղ, որ հիմա նրանց կամ՝ անհրաժեշտության դեպքում օգնության միջոցներ ծեռնարկելու համար:

Ես հաստատաբար խնդրում եմ պետդեպարտամենտին՝ հարցը քննարկել անհապաղ և սպառիչ ձևով՝ նպատակ ունենալով հասնել մի արդյունքի, ինչը հավանաբար կհանգեցնի բուրքական կառավարությանը զավելուն և հնարավորություն կընծերի արդյունավետ օգնության կազմակերպել, ինչը այժմ չի արտոնվում:

Դժվարանում եմ ինձ հետ պահել մի ազգ ոչնչացնելու այս փորձը կասեցնելու համար որևէ գործողության դիմելուց, բայց ես զիտակցում եմ, որ ես այստեղ եմ իրեւ դեսպան և պետք է խատորեն հետևեմ ուրիշ երկրի ներքին գործերին չմիջամտելու սկզբունքին: Եթե Դուք այս իրադրությունը համարեք արտակարգ, բող դեպարտամենտը հանձնարարի ինձ մեր կառավարության անունից միանշանակ բողոք հայտարարել: Հուսալով, որ ներքոհիշյալ առաջարկությունները կարող են օգտակար լինել մի հարցում, որը միաժամա-

\* Անհասկանալի է, թե ինչ է ակնարկում. հավանաբար, տեքստը եղծված է:

նակ հրատապ է, նուրբ և լրացուցիչ բարդացված՝ մեր կողմից այդ-  
քան տարբեր երկրների շահերը ներկայացնելու հանգամանքով, ես  
առաջարկում եմ հանգամանութեն քննարկել հետևյալը:

1. Միացյալ Նահանգների կառավարությունը մարդկության  
անունից պահանջում է բուրբական կառավարությունից անմիջապես  
դադրեցնել ներկա բռնարշավը և բույլատրել ողջ մնացածներին՝  
վերադառնալ իրենց տները, եթե դրանք պատերազմական գոտում  
չեն, կամ [գոնեն] նրանց նկատմամբ նորմալ վերաբերմունք ցուցաբե-  
րել:

2. Եթե մեր ներկա հարաբերությունները քույլ են տալիս,  
Գերմանիայի կայսեր պաշտոնական դիմում է արվում, որպեսզի նա  
ժուրդիային՝ իր դաշնակցին ստիպի դադրեցնել քրիստոնյա ազգի  
բնաջնջումը:

3. Պաշտոնական խիստ խնդրանք է անհապաղ արվում, որ-  
պեսզի ամերիկացիներին և որիշներին ամեն հնարավորություն  
տրվի ըստ իրենց հայեցողության այցելելու, դրամական կամ այլ  
օժանդակություն տրամադրելու հայերին, որոնք արդեն կառավարու-  
թյան որոշումով ենթարկվել են տեղահաննան:

Ես կարծում եմ, որ տվյալ պայմաններում երրորդ առաջարկը  
կարող է դրւս գալ ամենաընդունելին և որ այդ անպահտան մարդ-  
կանց անհապաղ օգնություն ցույց տալու մեր իրավունքի հարցում  
մեր կարծր ու անզիջում կեցվածքը ինքնին կենքաղը մեր բողոքող  
դիրքը: Պատերազմական այս լարված հրավիճակում այդ օգնության  
տրամադրումը հազարավոր մարդկանց փրկելու միջոց կարող է  
ինել, ինչից հետո իրավիճակը թերևս դառնա ավելի հուսադրող:

#### Սուրբենքառ

Stu' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915:  
Supplement: the World War, Washington: 1928, pp. 985-987.

file no. 867.4016/90

Ժուրդիայում դեսպանը (Սուրբենքառ) պետքարտուղարին  
[հեռագիր]  
Կոստանդնուպոլիս, օգոստոսի 11, 1915  
[ստացված՝ օգոստոսի 16]

1005. Ուազմական նախարարը խոստացել է բույլատրել այն  
հայերի մեկնումը ԱՄՆ, ում ներգաղթը ես երաշխավորում եմ անկեղ-

ծորեն (bona fide): Ժուրդիայում հայ ազգի բնաջնջումը արագորեն  
առաջ է լնթանում: Զարդերի մասին տեղեկացրուներ են ստացվել  
Անգորայից և Բրուսայից: Արդյո՞ք կառաջարկեիք Քյովենդ Դոչին,  
Չարլզ Ջրեյնին, Զոն Ռ. Մոտին, Սթիվեն Ռուայզին և որիշներին կազ-  
մել մի կոմիտե, որի նպատակը պիտի լինի հայերից ոմանց փրկելը և  
նրանցից ամենաաղքատների ներգաղթը օժանդակելու համար դրան  
հավաքելու ու միջոցներ հայթայթելու, ինչպես նաև Կալիֆոռնիայից,  
Օրեգոնից և Վաշինգտոնից՝ այդ մարդկանց Պատամայի ջրանցքով  
ուղղակի իրենց ավել տեղափոխելու նպատակով աշակցություն  
ստանալը:

#### Սուրբենքառ

Stu' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915:  
Supplement: the World War, Washington: 1928, p. 988.

file no. 867.4016/91

Ժուրդիայում դեսպանը (Սուրբենքառ) պետքարտուղարին  
[հեռագիր]  
Կոստանդնուպոլիս, օգոստոսի 12, 1915  
[ստացված՝ օգոստոսի 16]

929. Իմ 924, Օգոստոսի 11, 23:00. Գերմանական դեսպանը  
խիստ բողոք է հայունել Բ. Դուանը: Ինձ տեղեկացրել են, որ գերմա-  
նական կառավարությունը կտրականապես հերքում է ներքին  
շրջաններում բուրքերի տարածած հայտարարությունները, որ  
հակահայկական միջոցառումները ծագում են գերմանացիներից:

#### Սուրբենքառ

Stu' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915:  
Supplement: the World War, Washington: 1928, p. 985

file no. 867.4016/91

Թերարտուղարք Խորքիայում դեսպանին (Սորգենթառին)

[հեռագիր]

Վաշինգտոն, օգոստոսի 18, 1915

955. Զեր 924, օգոստոսի 11 և 929, օգոստոսի 12. Գերմանական դեսպանի բողոքը բարելավե՞լ է իրավիճակը:

Հանսինգ

Տես՝ Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 987.

file no. 867.4016/99

Թուրքիայում դեսպանը (Սորգենթառին) պետքարտուղարին

[հեռագիր]

Կոստանդնուպոլիս, օգոստոսի 18, 1915

[ստացված՝ օգոստոսի 21]

940. Ներքին գործերի նախարարն ինձ տեղեկացրեց, որ նահանգների կառավարիչներին են հեռագրվել հրամաններ, համաձայն որոնց բոլոր բողոքական և կարողիկ հայերը ազատվում են տեղահանումից: Չնայած շատերն արդեն տարագրվել են, որոնցից շատերն ել սպանվել, այնուամենայնիվ, այս հրամանները, եթե ճշորեն կատարվեն, ամերիկյան միսիաների հետ կապված շատ հայերի կյանքեր կփրկեն: Բոլորքական և կարողիկ հայերը կազմում են նրանց ընդհանուր թվի 10 տոկոսը, 90 տոկոսը լուսավորչական են: Ես խնդրել եմ տարագրությունից ազատել ամերիկյան հաստատությունների հետ կապված բոլոր հայ պրոֆեսորներին, ուսուցիչներին, ուսանողներին, խնամյալներին, բուժքույրերին և այլն: Եվ պատերազմի և թե ներքին գործերի նախարարները թվում են, թե հակված են ընդառաջելու իմ խնդրանքին: Ապահովել եմ մեր հյուպատոսարանների հայ աշխատողների ազատումը տեղահանումից:

Սորգենթառ

Տես՝ Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 987.

file no. 867.4016/101

Թուրքիայում դեսպանը (Սորգենթառին) պետքարտուղարին

[հեռագիր]

Կոստանդնուպոլիս, օգոստոսի 20, 1915

[ստացված՝ օգոստոսի 23]

950. Զեր 955. Գերմանական դեսպանի բողոքը չի բարելավել իրավիճակը ներքին նահանգներում: Գերմանական կառավարությունից՝ իր դեսպանին ուղղված հրահանգները՝ պահանջելու Բ. Դոնից, որ այդ սարսափելի տեղահանումները դադարեցվեն և բոլորի կրած վնասը փոխհատուցվի, այլ առյուրմներից եկող ներազդումների հետ համատեղ, կարող են շտկել իրավիճակը: Բոլղարները իմաստ դիմումներ են կատարել [Բ. Դոնից]:

Սորգենթառ

Տես՝ Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 987.

file no. 867.4016/100

Թուրքիայում դեսպանը (Սորգենթառին) պետքարտուղարին

[հեռագիր]

Կոստանդնուպոլիս, օգոստոսի 20, 1915

[ստացված՝ օգոստոսի 23]

947. Իմ 936. Լեսլիի թախանձագին խնդրանքի համաձայն՝ ես Ուրֆա ուղարկեցի Էղելմանին՝ օգնության նպաստներով: Խորքական իշխանությունները հրաժարվում են թույլատրել միջոցների բաշխումը: Ներքին գործերի նախարարը ինձնից պահանջեց հետ կանչել թե Լեսլիին և թե Էղելմանին, բայց ես մերժեցի, քանի դեռ նա չի թույլատրել պատերազմող երկրների քաղաքացիներին՝ հեռանալ քաղաքից և հրաժարվեցի հետ կանչել Էղելմանին, քանի դեռ Լեսլիի լիազորությունները չեն ճանաչվել: Լեսլիի ուղարկած գեկուցագրերը վկայում են, որ Ուրֆայով անցնող տարագրյալ հայերի քարավանների նկատմամբ բուրքերի վերաբերմունքը անցնում է ամեն չափ ու սահման և որ Ուրֆայում բոլոր քրիստոնյաները [Վտանգված են?]: Այդ պատճառով ես շատ էի մտահոգ, որ բոլոր կանայք և երեխանե-

ըլ մեկնեն այստեղից և ուզմական նախարարը իմ համա խնդրանքներից հետո միայն ...

Stu` Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 977.

file no. 867.4016/90

պետքարտուղարի պաշտոնակատարը Թուրքիայում դեսպանին  
(Սորգենթառուին)

[հեռագիր]

Վաշինգտոն, սեպտեմբերի 22, 1915

1092. Զեր 1005, սեպտեմբերի 3. Զեր նշած [շահագրգիռ] կող մերը զգում են, որ հայերի զանգվածային ներգաղթի ճանապարհին եղած խոշնդրութերը անհայթահարելի են, քայլ հետաքրքրվում են, թե արդյո՞ք Դուք ի վիճակի եք արդյունավետ կերպով օգտագործել հիմունից հարյուր հազար դրամ՝ տառապող ոչ-մուսուլմանների անհապահ օգնության համար՝ սննդի, հագուստի, տուն վերադառնալուն կամ ներգաղթին օժանդակելու տեսքով:

Փոլք

Stu` Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 988.

file no. 867.4016/218a

պետքարտուղարը Թուրքիայում դեսպանին (Սորգենթառուն)  
[հեռագիր]

Վաշինգտոն, հոկտեմբերի 4, 1915

1140. Մասնավոր աղբյուրներից հայերի հալածանքների մասին նամակները, որոնք հասել են ԱՄՆ և հրապարակվել թերթերում, ամերիկյան ժողովրդի մեջ առաջացրել են վրդովմունքի ընդհանուր և ուժգին զգացում: Զեզ հրահանգ է տրվում՝ շարունակել առաջարկել

\* Այստեղ տերսուր բնդիատված է: Ցավոք, այն լրիվ տեսքով հնարավոր չեղավ ներկայացնել, սակայն այս հատվածն էլ կարևոր համարելով՝ ներկայացնում ենք:

Զեր ծառայությունները՝ շտկելու համար հայերի դրությունը և խոշնդրություն հայերի նկատմամբ հալածանքների շարունակումը, տեղեկացնելով թուրքական կառավարությանը, որ այդ հալածանքները ի շիբ են դարձնում այն բարեկամության զգացումը, որ ԱՄՆ-ի ժողովուրդը տածել է մտուքիայի հանդեպ:

Համսինց

Stu` Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 988.

file no. 867.11/772

պետքարտուղարը Թուրքիայում դեսպանին (Սորգենթառուն)  
[հեռագիր]

Վաշինգտոն, հոկտեմբերի 6, 1915

1165. Կարո՞ղ եք ձեռք բերել ժուրքիայից հեռանալու իրավունք այն հայերի համար, որոնց ազգականները Ամերիկայում կվճարեն ճանապարհածախսը: Խնդրեմ պատասխանեք նաև դեպարտամենտի սեպտեմբերի 8-ի 1028-ը:

Համսինց

Stu` Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 989.

file no. 867.4016/90

Թուրքիայում դեսպանը (Սորգենթառուն) պետքարտուղարին  
[հեռագիր]

Կոստանդնուպոլիս, հոկտեմբերի 9, 1915

[ստացված՝ հոկտեմբերի 12]

1130. Զեր 1165, հոկտեմբերի 6. Զեմ ստացել Զեր 973, 974, 972, 1010, 1028: Անհնար է հստակորեն ասել, որ հայերի համար ընդիանության կարելի է բույլատրություն ձեռք բերել: Եթե Զեր 1023-ի բովանդակությունը հաղորդվեց Բ. Դուանը, այն հայտարարեց, որ քանի որ տեղահանյալների մեծ մասը դեռ ճանապարհին է, նախընտրելի է մի կարճ ժամանակ սպասել, մինչև տեղահանումը դադարի և քարավանները հասնեն իրենց նշանակման վայրերը: Բ. Դուանը այս

ժամանակ կիմանա նրանց գտնվելու վայրը և քննության կառնի ԱՄՆ մեկնելու դիմումները: Մինչև հիմա շատ քիչ հայերի է քույլատրվել հետանալ Թուրքիայից: Քղորն էլ ստիպված են եղել անցնել Կ. Պոլսով: Անոնները և մանրամասները ստանալուն պես ես կանեմ ամեն հնարավոր բան՝ հարմար պահին քույլտվություն ձեռք բերելու համար:

### Մորգեմթառություն

Sta' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 989.

file no. 867.4016/173

Գերմանական դեսպանը (Բեռնսուրփը) պետքարտուղարին  
[J. Nr. A 5952] Սիրարիջըստ, Նյու Յորք, հոկտեմբերի 8, 1915  
[ստացված՝ հոկտեմբերի 16]

Ժամանակին պարոն քարտուղար

Պատիվ ունեմ Ձեր կոնֆիդենցիալ ուշադրությանը ներկայացնել օգստոսի 9-ին Կ. Պոլսում Կայսերական դեսպանի պաշտոնակատարի կողմից կայսերական օսմանյան կառավարությանը հանձնված հայերի տարագրման մասին հուշագրի պատճենը:

Կայսերական օսմանյան կառավարությունը տեղեկացրել է գերմանական կառավարությունը, որ այն կծեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ազօրինություններին կրկնությունը կանխելու համար:

### 3. Բեռնսուրփ

[Աերդիր-քարգմանություն]

Գերմանական դեսպանատունը Թուրքիայում՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը հուշագիր

Հովհանի 4-ի իր հուշագրով գերմանական դեսպանատունը պատիվ ուներ Բ. Դուանը ծանոթացնել կայսերական գերմանական կառավարության տեսակետներին՝ անատոլական նահանգների հայ բնակիչների արտաքսման վերաբերյալ և նրա ուշադրությունը

հրավիրել այն փաստի վրա, որ որոշ տեղերում այդ միջոցառումները ուղեկցվել են բռնության գործողություններով, ինչահսկի են կոտորածներ և թալան, որոնք չին կարող արդարացվել օսմանյան կայսերական կառավարության հետապնդած նպատակով:

Գերմանական դեսպանատունը ցավով հաստատում է, որ համաձայն հետագայում անկողմնակալ և հավաստի աղբյուրներից ստացված տեղեկությունների, այդ կարգի միջադեպերը, փոխանակ տեղական իշխանությունների կողմից կանխվելուն, կանոնավորացես տեղի են ունեցել հայերի արտաքսման ժամանակ, այնպես որ նրանց մեծ մասը զոհվել է դեռևս տեղ շիասած: Այդպիսի դեպքեր հիմնականում արձանագրվել են Տրապիզոնի, Դիարբեքիրի և Էրզրումի նահանգներում: Որոշ վայրերում, օրինակ, Մարդինում, բոլոր քրիստոնյաները, առանց ցեղի և դավանանքի խտրության, նույն ճակատագրին են արժանացել:

Միևնույն ժամանակ օսմանյան կայսերական կառավարությունը նպատակահարմար գտավ արտաքսման հրամանը տարածել նաև Փոքր Ասիայի այլ նահանգների վրա, և բոլորովին վերջերս հզմիրի շրջանի հայկական գյուղերը նման պարագաներում դատարկվեցին իրենց բնակիչներից:

Կայսերական գերմանական կառավարյությունը հարկադրված է մեկ անգամ և բողոքել այդ սարսափելի արարքների դեմ և հրաժարվել որևէ պատասխանատվությունից, որ կարող է ծագել դրա հետևանքով: Այս անհրաժեշտ է համարում օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրել սույն հանգամանքի վրա, առավել ևս, որ հասարակական կարծիքը արդեն հակած է հավատալու, որ Գերմանիան, որպես Թուրքիայի բարեկամ և դաշնակից պետություն, կարող է արդարացրած կամ անգամ դրդած լինել բռնության այդ գործողությունները:

Պերա (Կ. Պոլիս), 9 օգոստոսի, 1915

Sta' Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, pp. 989-990.  
պ

Նիդեղանդմերում ներկայացուցիչը (Վան Դայքը) պետքարտուղարին

[հեռագիր]

Հաազա, հոկտեմբերի 12, 1915

[ստացված՝ հոկտեմբերի 13]

400. Երեկ արտաքին գործերի նախարարն ասաց, որ նա կիրահանգի Կ. Պոլսում Նիդեղանդմերի ներկայացուցիչն խորհըրդակցել ԱՄՆ-ի դեսպանի հետ, աջակցելու համար ըստ լուրերի՝ տեղի ունեցող հայերի կոտորածները դադարեցնելու ջանքերին:

Վան Դայք

State Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915:  
Supplement: the World War, Washington: 1928, p. 989.